



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ .....	1
<b>ԽՍԲԱԳՐԱԿԱՆ</b> .....	<b>2</b>
ՀԱՅ ՄԱՅՐՆ Է ՈՐ ԿԸ ԿԵՐՏԷ ԱԶԳԻ ԱՊԱԳԱՆ .....	2
<b>ՀԱՐՑԱԶՐՈՅՑ</b> .....	<b>5</b>
«ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՐԿՈՒ ԲԱՆ ԿԱՅ, ՈՐ ՉԻ ՅՈԳՆՈՒՄ. ՀԱՅԸ՝ ԿԱՌՈՒՑԵԼՈՎ, ԺԱՄԱՆԱԿԸ՝ ՔԱՆԴԵԼՈՎ ՈՒ ԱԻԵՐԵԼՈՎ» .....	5
<b>ԿԻՊՐԱՀԱՅ</b> .....	<b>9</b>
ԾԱՆՈՒՑՈՒՄ .....	9
ԽՕՍՔԸ ԿԸ ԹՈՒԻ, ԳԻՐԸ ԿԸ ՄՆԱՅ ՅԻՇԱՏԱԿՈՂ .....	10
21 ՓԵՏՐՈՒՄԸ 2024-ԻՆ ՎԱԽՃԱՆԵՑԱԻ Տ. ԵՂԻՇԷ Ծ. ՎՐԴ. ՄԱՆՃԻԿԵԱՆ, ՈՐ ՏԱՐԻՆԵՐՈՎ ԾԱՌԱՅԱԾ Է ԿԻՊՐՈՍԻ ԹԵՄԻՆ, ՈՐՊԷՍ ԿԱԹ. ՓՈԽԱՆՈՐԴ 1883-1997 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ .....	12
ԿԻՊՐԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ԱՐՄԱՏԵՐԸ.....	14
ԿԻՊՐՈՍ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ ՊԻՏԻ ԲԱՆԱՅ .....	16
<b>ՅՕԴՈՒԱԾՆԵՐ</b> .....	<b>16</b>
ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԻ ԿՈՄԻՏԱՍԸ .....	16
ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՐՏԻԿԸ՝ ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇԵԱՆ.....	19
Ի ԴԷՄՍ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԱՆԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ.....	22
ՀԱՅՐԵՆԻ «ՀԵՐՈՍ»ՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՎ ՎՐԱՅ .....	22
Կ՛ԱՐՁԱՆԱԳՐԵՆ ՊԱՏՈՒԱԲԵՐ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.....	22
ԹՈՒՐՔԻԱ Կ՛ԱՐԳԻԼԷ ԵՐԿԻՐ ՍՈՒՏՔԸ ԱՅՆ ՕՏԱՐԵԿԿՐԱՅԻՆԵՐՈՒՆ, ՈՐՈՆՔ ԿԸ ՔՆԱԴԱՏԵՆ ՆԱԽԱԳԱՀ ԷՐՏՈՂԱՆԸ .....	25
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԻՒՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ.....	27
<b>ՏԵՍԱԿԷՏ</b> .....	<b>29</b>
Ի՞ՆՉ ՏՈՒԱԾ Է ՀԱՅՈՒՆ ԼԻԲԱՆԱՆԸ.....	29
ՀԱՅՐԵՆԱՄԻՐՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱՆՊԱՏԱԿ ԸԼԼԱԼԸ ԲԱԽԱՐԱՐ ՉԷ՝ .....	31
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՋԵՐՄ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ .....	34
ԱՅՈ՞, ԹԷ՞ Ո՛Չ.....	37
ԱՆՈՒՆ .....	38
<b>ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ</b> .....	<b>41</b>
ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ.....	41
ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱԶԱՆՈՎ ԿԻՆՈՀԱՆՃԱՐԸ 100 ՏԱՐԵԿԱՆ Է.....	45
ՇՆՈՐՀԱՆԴԷՍ՝ Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻԻ «ՀԱԻԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ» ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ԱՂՕԹԱԳԻՐՔԻ 12-ՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ.....	46
«ԵՍ ՄԱՐԷՆ ԿՈՒ ԳԱՅԻ».....	47



ՊԱՆԹԷՈՆՆ .....50

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ ..... 51

ՔԱՌԵԱԿՆԵՐ..... 54

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ՀԱՅ ՄԱՅՐՆ Է ՈՐ ԿՐ ԿԵՐՏԷ ԱԶԳԻ ԱՊԱԳԱՆ



Մարտ ամսուան մէջ նշուող Կանանց միջազգային տօնը մեզի մտածել կու տայ հայ կնոջ եւ ի մասնաւորի հայ մօր մասին, քանզի յայտնի ճշմարտութիւն է, որ կնոջ գերագոյն առաքելութիւնը մայր ըլլալն է՝ սերունդներու ծնուցիչն ու սնուցիչը, անոնց առաջին եւ գերագոյն դաստիարակը: Անոնց հոգիներու արուեստագէտն ու ճարտարապետը:

Մօր անպայմանական, բոլորանուէր, գլխագիր ՍԷՐԸ կը հակադրուի մեր ժամանակներու ՈՅԺԻ ցուցադրութեան, ՈՅԺԻ ահաւոր մրցակցութեան, ՈՅԺԻ բռնապետութեան հետ, որոնց հետեւանքով է որ պատերազմներ կը հրահրուին անընդհատ: Եւ երկիրներ ու պետութիւններ զիրար կը յօշոտեն անխնայ, վայրագաբար, մահ ու ւաւեր սփռելով:

Կինն ու մայրը կը մնան գերագոյն խորհրդանիշը Սիրոյ եւ անոր ուղեկից Խիղճի: Յովհաննէս Շիրազ մեծ բանաստեղծը այնքան իրաւացիօրէն պիտի գրէր. «Թէ որ մայրը կայ, Խիղճը չի մեռնի, Թէ որ խիղճը կայ, Աստուած կը յառնի»:

Մօր կաթին հետ միատեղ մանկան մէջ կը ներծծուին, արդարեւ, սէր ու բարութիւն, ազնւութիւն ու վեհանձնութիւն...Մօր «օրօրոցային» երգերուն հետ, մանկան մէջ կը սերմանուին քաջութիւն ու հայրենասիրութիւն, մաքառելու եւ պայքարելու ոգի, անմնացորդ սէր հայոց լեզուին եւ մեր բարոյական արժէքներուն, աւանդութիւններուն...: Մօր առօրեայ կենցաղն ու վարքագիծը, անոր դրսեւորած առաքինութիւնները ներշնչող օրինակ կը դառնան մանկան ու պատանիին, եւ անշուշտ՝ հակառակը, անոնց բացակայութեան պարագային: Ի գուր չէ որ Սիլվա Կապուտիկեան՝ մեծ բանաստեղծուհին, շեշտած է. «Մա՛յր, դարեր սուրբ է եղել քեզ համար զիր ու օճախ, Դու քո շնչով ես պահել մեր հին ոգին կենդանի»: Հայ մայրը խորհրդանիշ է նաեւ պատուախնդրութեան եւ հոգեկան արիւթեան: Աւետիք Իսահակեան պիտի գրէր իր օրագրութեան էջերուն մէջ ...«Մենք սերունդներով, մինչեւ հայութեան կեանքի վերջը, դարե՛ր, դարե՛ր, չպիտի մոռանանք մեր թափուած արեան ո՛չ մի կաթիլը եւ վրեժ պիտի խնդրենք,...վրեժի կաթ պիտի տան մեր մայրերը մեր ծնուող մանուկներին... մեր գոյութեան իմաստը վրեժը, միայն վրեժը պիտի լինի...»: Իսկ



այդ ՎՐԷԺԸ ունի բազմաթիւ դրսեւորումներ՝ հայօրէն ապրելէն, հայօրէն յարատեւելէն մինչեւ մեր երկաթեայ բազուկի կերտումն ու պահանջատիրական պայքարի ոգին:

Մեր փոթորկայոյց պատմութեան ամբողջ երկայնքին, հայ մայրը, թե՛ իր առողջ բնագոյով ու իմաստութեամբ, թե՛ բարձրագոյն ինքնագիտակցութեամբ եւ զոհաբերումով, կրցեր է բարձր պահել իրեն վստահուած մարդակերտումի եւ ազգակերտումի ծանրագոյն պատասխանատուութիւնը, նոյնիսկ ամենէն անողոք պայմաններու տակ, ընդ հուր եւ ընդ սուր, եւ ազգային-հայրենասիրական ոգին փոխանցեր է իրերայաջորդ սերունդներուն:

Որքան դիպուկ կը հնչեն հանճարեղ վիպասան Ռաֆֆիի խօսքերը. «Կինը մեզ տուեց լեզու, ազգութիւն, ամրապնդեց ընտանիքի բարոյական հիմունքները»:

Պերճախօս են մեր պատմութեան քանի մը օրինակները այս գծով: Յիշենք՝ Վարդանանց պատերազմէն ետք, հայ փափկասուն Տիկնանց յանձն առած զոհողութիւնները, ինչպէս նաեւ պատասխանատուութիւնները՝ Սուրբ Վարդանի հետ նահատակուածներուն փոքր երեխաները կրթելու գործով, ինչպէս կը գրէ Ղազար Փարպեցի, ակնարկելով յատկապէս Վարդանի Հմայեակ եղբօր կնոջ, որ իր մտաւոր բարձր զարգացումով « մեծցուց եւ դաստիարակեց իր երեք զաւակները՝ Վահանը, Վասակը եւ Արտաշէսը...», որոնց մէջ «Վահան իր մօր խորհուրդներով սնած, իտէալներով տոգորուած մեծ հայ մը եղաւ»: Նմանապէս, Ձուիկ տիկինը յանձն առաւ, ինչպէս կը գրէ Լեօ, ոչ միայն գերութենէ ազատած զաւակներուն դաստիարակութեան գործը, այլ ամբողջ դպրոց մը բացաւ դաստիարակելու համար պատերազմէն որք մնացած Մամիկոնեաններուն եւ Կամսարականներուն զաւակները: Յիշենք՝ 19-րդ դարու հայկական Չարթօնքի սերունդին յառաջադէմ հայուհիները՝ Սրբուհի Տիւսաբ, Սիպիլ, Ջապել Եսայեան, Արշակուհի Թեոդիկ եւ ուրիշներ, որոնք հիմնադրեցին « Ազգանուէր Հայուհեաց Միութիւնը» եւ օրիորդաց դպրոցներ բացին հայկական զաւառներու մէջ, խորապէս հաւատալով որ «Ազգի մը սիրտը կինն է», եւ անոր առողջ ու առոյգ բաբախումէն կախեալ են ազգի լիարին կենսունակութիւնը, անոր յառաջընթացն ու ազատագրումը: Յիշենք՝ Եղեռնի սեւ օրերու անանուն հայ տարագիր մամիկները, որոնք Տէր Զօրի գորշ աւազին վրայ, իրենց կմախացած ձեռքերով դրոշմեցին «Այբ-Բեն-Գիւմ»ը, զայն կտակելով յաջորդական սերունդներուն որպէս ազգի փրկութեան լաստ, հայեցի լինելութեան բանալի:

Ազգերը կը յարատեւեն պատմութեան մէջ եւ մեծ կ'ընծայուին, արդարեւ, երբ անոնց զաւակներուն ծնունդ ու սնունդ տուող առաջին եւ գերագոյն դաստիարակները, մայրերը, իրենց սեփական կերպարով, սիրով ու գիտակցութեամբ, վարք ու բարքով ու դաստիարակութեամբ՝ մատղաշ հոգիներուն մէջ կը բոցավառեն ազատ այլեւ պատասխանատու, արժանապատիւ ու քաջակորով, ազնիւ եւ հայրենասնուէր, արդարամիտ եւ արիասիրտ վարքագիծով ապրելու տենչն ու տենդը...

Եթէ կրցեր ենք դիմակայել հայոց պատմութեան անթիւ ու անհամար հարուածներուն, պահել անաղարտ հայ հոգին ու ինքնութիւնը, ատիկա կը պարտինք մեծաւ մասամբ հայ մօր եւ անոր շնորհիւ անխաթար մնացած հայ ընտանիքին, որուն ամբողջութիւնը այժմ եւ ընդմիջտ



գերագոյն գրաւականներէն մէկն է ազգային պետականութեան հզօրութեան, հայ լինելութեան երթին...

Արագընթաց եւ յարափոփոխ մեր ժամանակներուն, համաշխարհայնացման լափլիզող յորձանքը, նիւթապաշտ եւ օգտապաշտ մտայնութիւնը, ազատութեան եւ մարդկային իրաւունքներու անուսով ի յայտ եկած տարականն եւ այլանդակ երեւոյթները կը սպառնան այլասերել հայ կնոջ կերպարն ու հոգեկերտուածքը..., շրջիվայր փոխել նոյնպէս հայ ընտանիքի պատկերը, քայքայել զայն: Այսօր ի՛նչ-ի՛նչ մարտահրաւերներու դէմ յանդիման կը գտնուին հայ մայրն ու հայ ընտանիքը, երբ օրէ ցօր կը բազմանան օտար ամուսնութիւնները, ամուսնալուծումները, ձուլման եւ այլասերման սպառնալիքները, օտար ու խորթ բարքերն ու ապրելակերպը, ինչ որ կը պահանջէ հայ մայրէն առաւել մեծ զգօնութիւն եւ գիտակցութիւն, մաքառելու եւ պայքարելու կամք, բայց մանաւանդ մեծ պատասխանատուութիւն ու յանձնառութիւն: Պատասխանատուութիւն՝ առաքելական նուիրումով զբաղելու իր գաւակին դաստիարակութեամբ, ամբողջանուէր սիրով պահել-պահպանելու իր ընտանիքը, որ հիմքերու հիմքն է երկրին ու ազգին:

Մեր օրերու թոհուրոհին մէջ, շատ յաճախ ընտանեկան դաստիարակութիւնը անտեսուած է ամբողջովին, երբ մանաւանդ փոքրիկներ զբաղած են գերազանցօրէն օր է օր սրընթաց աճող թեքնիք սարքերու ընձեռած սուտ ու փուճ «հաճոյք»ներով, շատ անգամ անոնց մոլի գերին դառնալով: Համակարգիչը, համակարգչային բազմապիսի խաղերը, բջիջային վիրթուալ տարածքի սարքերը՝ իրենց բիւր հնարաւորութիւններով, կլանած կը թուին ըլլալ անոնց համակ ուշադրութիւնը, զանոնք հեռացնելով մարդկային բնական կապերէն, գիր ու գրականութենէն, իրա՛ւ արուեստէն ու մշակոյթէն, ընտանեկան ջերմ ու անմիջական շփումներէն: Ճշմարիտ դաստիարակութենէն: Տակաւ տխուր ականատեսը կը դառնանք, թէ ինչպէ՞ս այդ թեքնիք «հրաշալիքները» կը սպառնան ռոպոթացնել մատղաշ ուղեղները, բթացնել մարդկային սիրտն ու զգացումները, բրտացնել հոգին..:

Որքան առաւել ուշագրաւ կը դառնայ մօր դերակատարութիւնը որպէս հիմնական դաստիարակը իր գաւակներուն, արթուն պահակը անոնց: Պիտի թողո՞ւնք որ այդ ռոպոթանման սարքերը կառավարեն իրենց կեանքը, թելադրեն իրենց ինչպէ՞ս ապրիլ, ինչպէ՞ս մտածել..: Պիտի թողո՞ւնք վերջապէս որ իրենց մատղաշ ուղեղները կազմաւորուին անոնց թելադրած խաղի կանոններով..:

Մայրն է հիմա եւ ընդմիջտ ընտանիքին բուն սիւնը, առանց որուն ոչ միայն կը քայքայուի ընտանիքը, այլեւ կը վտանգուի հոն մեծցող մատղաշ սերունդի դաստիարակութիւնը, որ կը դառնայ թերի ու խարխուլ:

Այսօրուան եւ յետագայ մայրերէն է կախեալ, գերազանցօրէն, ազգի եւ հայրենիքի հզօրութիւնը, ազգային պետականութեան ամրութիւնը: Մեր հաւաքական լինելութիւնն ու ապագան: Համաշխարհայնացման համահարթեցնող, ազգ ու մշակոյթ, ինքնութիւն ու ընտանիք քայքայելու եւ ջնջելու միտող համայնակուլ յորձանքին դէմ, ազգային հրամայական գերխնդիր է դրուած՝ վերագտնելու, վերիմաստաւորելու եւ վերարժեւորելու Հայ Մօր կերպարի, վարք ու բարքի եւ առաքելութեան լուսեղէն եւ ոգեղէն խորհուրդը,

որպէս ազգի ու հայրենիքի յարատեւման էական եւ առանցքային երաշխիք: Եւ որքան ճիշդ է ըսուած. «Մայրերու ափին մէջ պիտի փնտռել ազգերու ճակատագիրը»: ( Գարեգին Նժդեհ)

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

### «ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՐԿՈՒ ԲԱՆ ԿԱՅ, ՈՐ ՉԻ ՅՈԳՆՈՒՄ. ՀԱՅՐ՝ ԿԱՌՈՒՑԵԼՈՎ, ԺԱՄԱՆԱԿԸ՝ ՔԱՆԴԵԼՈՎ ՈՒ ԱԻԵՐԵԼՈՎ»

ՄԱՐԻ ԲԱՐՍԵՂԵԱՆ-ԽԱՆՋԵԱՆԻ հետ մեր զրոյցը նրա առաջին՝ «Խորհուրդն արքայի» գրքի շուրջ է:

-Իսկապէ՛ս երագում հանդիպել և զրուցել էք Տիգրան Մեծի հետ, թե՛ սա գեղարուեստական հնարք է՝ նախնեաց իմաստուն խօսքն ու խորհուրդը երիտասարդ սերնդին հաղորդելու:



-Իսկապէս հանդիպել եմ, և այդ հանդիպման մէջ միստիկ բան կայ. ինձ շարունակ մտատանջել է իմ երկրի ու ժողովրդի անցած ծանր ու դաժան պատմական ուղին: Ես յաճախ փորձել եմ մտքի լարումով մեր հզօր արքաների յաղթանակների խորհուրդը հասկանալ, մտովի նրանց հետ նոյնիսկ զրուցել եմ: Բայց նրանք ասես չեն ուզել բացուել իմ առաջ: Եւ յանկարծ մի օր երագում ես յայտնուում եմ Արքայից արքայ Տիգրանի պալատում. հաւանաբար այդ հանդիպման համար ես երկար տարիներ պատրաստ չեմ եղել: Գեղարուեստական խօսքն ինքը յաճախ է դիմում հնարքների, այն հեղինակին հնարաւորութիւն է տալիս ոչ

միայն անկեղծանալու, այլեւ խօսքին առաւել սուր և յարաճուն բնոյթ տալու: Ես եւս փորձեցի իրական, բայց միստիկ երագին համադրել գեղարուեստական հնարքը: Մերունդները կրթում և դաստիարակում են նախնիների հերոսական գործերով և իմաստուն մտքերով: Եթէ կտրուում է սերունդների կապը ինչ-ինչ պատմական վայրիվերումների պատճառով, կտրուում է նաեւ հոգեւոր ժառանգութեան շարունակականութիւնը: Մերնդափոխութիւնը սոսկ նոր սերնդի ծնուելը չէ: Մենք եթէ չենք կորցրել լիովին, ապա դարերի ընթացքում փոքր առ փոքր թուլացրել ենք այդ հոգեւոր և ոգեղէն կապը մեր նախնիների հետ: Հենց այդ թոյլ կապն է պատճառը, որ մենք հեշտութեամբ հեռանում ենք հայրենիքից՝ թողնելով այն պատմութեան դաժան հարուածների տակ: Իսկ մեր պատմութիւնը լի է օտար գաւթիչների բռնութիւններով, թալանով և կոտորածներով: Մեր հեռանալը հայրենիքից հաւասարագօր է տկարացած ծնողին մենակ ու բախտի քմահաճոյքին թողնելուն: Այո՛, «Խորհուրդն արքայի»-ն ուղերձ է երիտասարդներին, ի դէպ, խորհուրդ է ոչ միայն որպէս խրատ, այլեւ խորհուրդ խորին, իմաստ, էութիւն: Երկրի ապագան երիտասարդների ձեռքում է, և նրանք իրենց առոյգ ու կայտառ մտքով, պայծառ հոգով պատրաստ են սխրանքի, եթէ մենք՝ մեծերս, սերնդափոխութեան անխախտ օրէնքով նրանց փոխանցենք մեր փորձն ու իմաստութիւնը: -Համամի՛տ էք Մեծն Տիգրանի պատգամին՝ «Հայն օտար երկրում չունի անելիք». չե՞ որ մենք օտար երկրներում ապրող մեծեր ենք ունեցել՝ Սարոյեան, Ազնաւուր, Այվազովսկի, Ռուբէն Մելիք և այլք, բազմաթիւ մեծահարուստներ:

-Այդ մարդիկ, որտեղ էլ ապրէին, միեւնոյն է, մեծ էին լինելու: Հայոց բեղուն հողի ծնունդ են



Մաշտոցը, Խորենացին, Նարեկացին, Քուչակը, Թումանեանը, Չարենցը. կարող եմ թուարկել էլի շատերին: Հայի հանճարն ու տաղանդը անգամ ամենաանբարենպաստ պայմաններում են ծաղկում, էլ ուր մնաց խաղաղ ու բարեկեցիկ պայմաններում չդրսեւորուն, այն էլ՝ յաճախ օտար երկրում: Մենք՝ հայերս, նման ենք ճրագի, և ինչպէս ժողովրդական ասացուածքն է փաստում՝ «Ճրագն իր տակը լոյս չի տալիս»: Մենք ճրագի նման չորս կողմը լուսաւորում ենք, ինքներս մնում ենք մթութեան մէջ:

**-«Մեր մտքի կանթեղ, մեր ոգու ճաճանչ անփոյթ կորցրել ենք մեր երթի ճամբին և փոխարէնը օտարութեան մէջ ոչինչ չենք գտել»:**

**Այստեղից էլ յաջորդ հարցը. կարող ես չհեռանալ հայրենիքից, սակայն այդպէս էլ չգտնել քո տեղը և ինքդ քեզ: Այդ դէպքո՞ւմ էլ չպէտք է գնալ օտար երկիր:**

-Այն, որ օտարութեան մէջ ոչինչ չենք գտել, փաստ է: Այն հայրերդիները, ովքեր փառքի են արժանացել օտար երկրներում, նրանց փառքն ու անունը տուեալ երկրին են պատիւ և նիւթական շահ բերել, իսկ մենք հեռուից նայել և միամտօրէն ուրախացել ենք, որ նրանք էլ են հայ: Ռափայել Պատկանեանը մի բանաստեղծութիւն ունի, որտեղ ցաւով ու զայրոյթով ասում է, որ եթէ հայի տաղանդից ու հարստութիւնից Հայաստանն օգուտ չունի, ուրեմն նա արժանի չէ յարգանքի: Մա ասել է նա դեռեւս 19-րդ դարում: Այսօր էլ շարունակում ենք «մեր երթի ճամբին» վատնել աստուածապարգեւ մեր տաղանդն ու հանճարը: Աստուած մեր հանդէպ եղել է շոյալ ու բարեհաճ՝ պարգեւելով տաղանդ ու հանճար, բայց և պատժել է, ասես մենք չենք կարողանում գնահատել մեր կողքին ապրող տաղանդաւոր և հանճարեղ մարդկանց: Մի առիթով Վ. Սարոյեանն ասել է, որ Հայաստանում և աշխարհում տաղանդաւոր հայերը շատ են, և Հայաստանում բոլորի համար տեղ չկայ: Ամենայն հաւանականութեամբ, նա այդ խօսքերով արդարացնում էր իր՝ հայրենիք չվերադառնալը: Ես էլ հակընդդէմ հարց ունեմ. իսկ ո՞վ էր մեզ ասում, որ մեր երկիրն այնքան փոքրացնէինք, որ տասը հանճարեղ և քսան տաղանդաւոր հայ կողք կողքի չկարողանան ապրել: Մի օրինակ բերեմ. Օհան Դուրեանի նման հանճարեղ դիրիժորին նսեմացնելով՝ հեռացրին: Նրան փոխարինեց երիտասարդ, գուցէ և տաղանդաւոր դիրիժոր (չեմ լսել նրա համերգները, չեմ կարող կարծիք յայտնել): Եթէ նոյնիսկ շատ տաղանդաւոր է, թող հանճարն ու տաղանդը մեր երկրում կողք կողքի ապրեն, և լինի առողջ ու բարի սերնդափոխութիւն:

**-Կարելի՞ է ասել, որ հայի տեսակը վտանգուած է նաև հայրենիքում: Ինչպէս գրել էք՝ «Մենք կորցրել ենք կորուստն զգալու զգօնութիւնը մեր, որի կորստով կը կորցնենք մեզ էլ»:**

-Այո՛, ասեմ՝ ինչու: Ճիշտ է, մենք մեր երկրում ենք, մեր լեզուական, բարոյահոգեբանական և ասանդորթային միջավայրում: Թուում է, թէ վտանգ չկայ: Բայց դա երեւութական է: Դարի օտարամիտ գաղափարներն այնքան խոր շերտեր են թափանցում, որ նոր սերունդը, որն ամենաանպաշտպանն է, յայտնուում է ինքնահրաժարումի և, որ ասելի վտանգաւոր է, ինքնաժխտման ջրապտոյտի մէջ, որը կը տանի ինքնառչնչացման: Ահա այդ աղճատուած հոգեբանութեամբ և մտածողութեամբ մարդիկ են յայտնուել քաղաքում, և ես շատ յաճախ ինձ օտար քաղաքում եմ զգում: Երեւանը, իմ սիրելի Երեւանը, իմ երիտասարդութեան Երեւանն ասես խեղճացել է, գորշացել: Մենք մեր տան դուռը պիտի փակ պահենք, պատերն ամուր կառուցենք, որ ով ասես չմտնի, չաղարտի մեր տունը: Մենք մեր երեխաների հոգու և մտքի սափորը պիտի լցնենք մեր հոգու և ոգու լոյսով, իսկ եթէ մի փոքր դատարկ տեղ թողնենք, ապա դատարկը ինչով ասես կարող է լցուել: Եւ լցնում են:

**-«Գիտե՞նք, թէ ով է մեր բարեկամը և ով՝ թշնամին»:** Սա արքայի հռետորական հարցն է,



**քանի որ պատասխանը, ըստ էության, ակնկալելի է՝ չզիտենք: Եւ արդեօք ներսի՞, թե՞ դրսի թշնամուց պիտի զգուշանանք:**

-Այս էլ քանի դար մենք՝ հայերս, այդպէս էլ չենք ճանաչել մեր թշնամիներին, ոչ բարեկամներին, երբեմն էլ՝ բարեկամներին: Ով մեզ բարի և քաղցր խօսք է ասել, յաճախ կեղծ՝ մեր զգօնութիւնը բթացնելու նպատակով, ով խարդաւանքից առաջ ժպտացել է մեզ, ով գովել է մեզ, որպէսզի մեր տաղանդը, ռազմական ու շինարարական շնորհները ծառայեցնի իր երկրին, մենք նրան անվերապահօրէն հաւատացել ենք և բարեկամ անուանել: Ես հայ ժողովրդին նմանեցնում եմ իր աստուածատուր մրգին՝ ծիրանին: Ծիրանենին մեր շրջապատի թերեւս միակ ծառն է, որ նախ ծաղկում է՝ շքեղ հարսնաքօղով ծածկելով իր մերկ ճիւղերը, յետոյ է միայն տերեւակալում: Տերեւներն ինչ-որ չափով պաշտպանում են ծաղիկները տարածամ ցրտահարութիւնից, կարկտից և ծաղկավիժում առաջացնող անձրեւներից: Ծիրանենին խաբւում է վաղ գարնան մի քանի տաք ու արեւոտ օրերի ջերմութիւնից և մի քանի օրում ծաղկում է, մինչդեռ առջեւում փորձութիւններով լի լեռնային երկրի անկանխատեսելի գարունն է: Ներքին թշնամու՝ մասին էք հարցնում: Իհարկէ, եղել է և կայ այդ թշնամին: Ներքին թշնամի բոլոր ժողովուրդներն էլ ունեն, բայց մեր ներքին թշնամին քաղաքական չի եղել ի սկզբանէ, այն բարոյական դաշտում է աւերածութիւններ արել, որ նախկինում էլ, այսօր էլ քաղաքական հետեւանքների է վերածուել: 2000 և աւելի տարի առաջ, ոգեղէնութեան տիրոյթում է ապրել մեր ազգը, միտումնաւոր և նպատակասլաց դաւադրօրէն օտար արժեհամակարգ «պատուաստուեց», դա նիւթապաշտութիւնն էր, որ մինչև հիմա չենք կարողանում մաքրել մեր միտքն ու հոգին այդ ախտից: Վկան քաղաքական կարեւորութիւն ունեցող անհատների՝ թագաւորների, իշխանների, հոգեւոր առաջնորդների դարերով մեզ «դաւանած» նիւթապաշտութիւնն է եղել, որը մեր հայրենիքն ու ժողովրդին դրեց կորուստներ տալու և չզգաստանալու թմբիրի մէջ: Այսօր չկան ո՛չ թագաւորների, ո՛չ նախարարների ճոխ ու շքեղ պալատները, չկան այն մեծահարուստ հայերի ապարանքներն ու անգամ դիզած ոսկիները, իրենք էլ դարձան եաթաղանի գոհ սովորական մահկանացուների պէս: Մեզ Արքայից արքան սթափութեան կոչ ու յորդոր է անում: Դեռ կարող ենք ազգովին վերադառնալ մեզ հոգեհարազատ բարոյական արժէքների դաշտ:

**-Գրքում ասում է, որ «Կինը նախ մայր է՝ զինուոր ծնանող»: Եւ Ձեր իսկ տողերով ուզում եմ հարցնել՝ կինը հայոց երկրում յարգուած է եղել և յարգուած է այսօր: Ո՞վ է հայ կինը և արդեօք կարիք ունի՞ դրսից ներմուծուող «գենդերային հաւասարութեան» քարոզների:**

-Մեր աստուածների դիցարանում մենք ունենք Անահիտ մայր աստուածուհի: Ուրիշ ոչ մի ազգի դիցարանում կին աստուածուհին այր աստծոյ կողքին հաւասար արժանիքներ չունի: «Կին» բառը, որ ի սկզբանէ ունեցել է «ծին», «գեն», «կեանք տուող» իմաստը, եղել է աստուածային, ստեղծող, արարող սկիզբ ունեցող էակ: Անզլերէնում, ի դէպ, պահպանուել է թագուհի իմաստով՝ queen: Մեր ժողովուրդը կնոջը մեծարելու և գնահատելու կրողն է եղել երկար դարեր: Հայ գերդաստաններում էլ մինչև 20-րդ դարի սկիզբը կինը յարգուած ու գնահատուած է եղել: Ես երևի մի առանձին յօդուածով կ'անդրադառնամ հայ գերդաստանին և նրա մէջ կնոջ դերին: Կինը հաւասար է տղամարդուն որպէս Աստծոյ ստեղծած մարդ, կամ ինչպէս մեր ժողովուրդն է ասում՝ կինարմատ, այսինքն՝ ծնող արմատ: Կինն իր մտաւոր ունակութիւններով և հոգեւոր աշխարհով բնաւ չի զիջում այր մարդուն, գուցէ որոշ հարցերում նոյնիսկ աւելի ուժեղ է նրանից. թող տղամարդիկ չվիրաւորուեն. բնութիւնը կնոջ փխրուն ուսերին է դրել մարդ տեսակի՝ մարդկութեան պահպանման ողջ բեռն ու պատասխանատւութիւնը: Կարո՞ղ ենք պատկերացնել, որ կինը (անգամ կենդանական աշխարհում էզը) ծնուած երեխային պարզապէս թողնի-հեռանայ և իր անձնական երջանկութիւնը կառուցի: Բացառութիւնները բարոյական անկման դրսեւորումներ են:



Աշխարհը հիւանդացել է «գենդերային» տկարամտութեամբ: «Առաջաւոր և ժողովրդավարական» Արեւմուտքը, Ամերիկան էլ հետը, մինչև հիմա էլ կնոջ անհաւասարութիւնն ու ճնշուածութիւնը յաղթահարելու խնդիր ունեն: Օրէնքն ընդունուում է այնտեղ և այն ժամանակ, երբ որոշակի յանցագործութիւնը յաճախանում է: Պարզապէս, մեր ժողովրդի բախտը չի բերել. միջնադարում և աւելի ուշ շրջանում մեզ իշխել են կամ մշակոյթի այլ դաշտում եղող ազգեր, կամ մեզնից շատ ցածր ազգեր. երկու դէպքում էլ մեզ պարտադրուել է օտարի բարոյական վարքականոնը: Հիմա էլ «լուսաւորեալ» Եւրոպան է միջամտում մեր տան գործերին: Հայ տղամարդու կերպարի մասի՞ն էք հարցնում: Այո՛, կորուստներ է տուել, և պատճառը օբյեկտիվ է, իր ներսից չի գալիս: Վերջին քսան տարիներին հայ տղամարդն իր պետութեան կողմից այնպէս է նսեմացուել սոցիալապէս, հետեւաբար նաև բարոյապէս, որ նա խեղճացել է ու կորցրել ինքնավստահութիւնը, մանաւանդ երբ տեսնում է իրենից առանձնապէս բարձր արժանիքներ չունեցող և սոցիալական ու հասարակական սանդղակի բարձր աստիճանին հասած մարդկանց: Որոշ տղամարդիկ ընկճուում են, ոմանք, ցանկացած միջոցներով, փորձում են իրենք էլ այդ սանդղակի վրայ տեղ գրաւել: Արքայի խորհուրդը դրան էլ է վերաբերում:

**-Արքայից արքան ռազմավարի իր փորձից դաս է տալիս մեզ, «որ սահմանները ցանկացած երկրի զինուորն է գծում»: Գիտե՞ն կամ գիտակցո՞ւմ են մեր հասարակութիւնը և առաւել եւս պետական այրերը այդ պարզ ճշմարտութիւնը:**

-Սա երեւի աշխարհի սկզբից միակ անփոփոխ օրէնքն է եղել: Այսօր գերտերութիւններն են որոշում և՛ աշխարհի ճակատագիրը, և՛ պետութիւնների սահմանները: Սա ազնիւ «կռիւ» չէ՛ մեծն Տիգրանի բնորոշմամբ: Այո՛, զինուորն է որոշում և «գծում» իր հայրենիք-պետութեան սահմանները: Մենք՝ հայերս, զինուորի պաշտամունք ենք ունեցել, չէ՞ որ նա էր պաշտպանում երկրի սահմանները: Բայց երբ կորցրինք մեր պետականութիւնը, և մեր հայրենիքի տարածքում օտար զաւթիչներն իրենց բռնակալ պետութիւնը հիմնեցին, այդ ժամանակից օտար, բարբարոս զինուորի կերպարը մթագնեց հայի՛ հող-հայրենին պաշտպանող ռազմիկի յուշը: Առաջին հանրապետութեան գոյութեամբ, բարբախտաբար, վերականգնուեց հայ քաջ զինուոր-մարտիկի կերպարը: Խորհրդային տարիներին ակնածանքը զինուորի հանդէպ կրկնապատկուեց: Մինչդեռ անկախութեան տարիներին յաղթած հայ զինուորն անտեսուեց: Ինչո՞ւ, որովհետև պետութեան ղեկի մօտ յայտնուած մարդիկ պետականութեան գաղափարի կրողներ չէին, այլ իշխանութեան գալու մտայնութիւն ունեցողներ: Ահա թե ինչու Արքայից արքայի յորդորն է ու հրամանը՝ «Միրի՛ր քո ժողովրդին, և նա քո բանակն անպարտ կը դարձնի»: Բայց, ցաւօք, կարծես պակասել են սերը մեր միջեւ և իշխանաւորի սերը ժողովրդի հանդէպ: Մենք ասես պարտադրուած ենք լաւ զինուոր լինելու, քանի որ մեր շուրջն այլոց հողը զաւթելով «կուշտ ու ծոյլ» ապրողները շատ են: Գիտնականներն աշխարհի հակասութիւնների հիմքում դնում են մի հետաքրքիր տեսութիւն. կան ստեղծող, արարող ազգեր, կան և աւերող, կործանող ազգեր: Չեմ ուզում ազգերի անուններ յիշատակել: Ահա այդ երկու ուժերի յարատեւ բախումներն են աշխարհը պահում պատերազմների ու աւերածութիւնների յորձանուտի մէջ: Մեծն Նժդեհն ասել է. «Աշխարհում երկու բան կայ, որ չի յոգնում. հայը՝ կառուցելով, ժամանակը՝ քանդելով ու աւերելով»: Ժամանակի մէջ նա տեղաւորել է բարբարոս, նենգ ու խարդախ պատմութիւն գրած բոլոր ազգերին:

**-Մեծն Տիգրանի վերջին յորդորը իրականանալի՞ էք համարում այսօր:**

-Այո՛: Մենք ենք մեր երկրի տէրը, մենք ենք ընտրում պաշտօնեաներին, և մե՛նք էլ կարող ենք թոյլ չտալ, որ նրանք իշխանաւոր դառնան:

Մենք պիտի մեր ազգի բոլոր մեծերի բարոյական ուժը, յաղթանակների խորհուրդն ու կամքը փոխանցենք սերունդներին, որպէսզի սերունդների միջեւ հոգեւոր կապի խզում չլինի:



Զրուցեց

Արմինե ՄԱՐԳՍԵԱՆԸ

Հ. Գ.- «Խորհուրդն Արքայի» գիրքը հեղինակն անվճար տրամադրելու է Հայաստանի և Արցախի զորամասերին, բռնիներին և աւագ դպրոցներին՝ Արքայից արքայի իմաստուն խօսքը երիտասարդներին հասցնելու համար:

## ԿԻՊՐԱՀԱՅ

### ԾԱՆՈՒՑՈՒՄ



**ՀՐԱԴԻՐԱԳԻՐ  
ՇՆՈՐՀԱՆԴԵՍ**

Տիկ. ԵՐԱՆ ԿԵՐԹՄԵՆԵԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ

**ԵՐԱՆԻ ԼՈՅՍ** ժողովածուին  
(Յուշագրություն, Հրապարակագրություն, Բանաստեղծություն)  
Խմբագիր՝ Պրն. ԳԵՈՐԳ ԵԱԶԸՃԵԱՆ


**Հինգշաբթի, 4 Ապրիլ 2024-ին, ժամը 15:00-ին,**  
Աւետիք Իսահակեանի անուան գրադարանի  
սրահին մէջ, Երեւան

Խօսք կ'առնեն՝ Տիկ. Ռուզան Ասատրեան, Տիկ. Անուշ Վարդանեան  
Եւ Պրն. Յովհաննէս Պապիկեան: Գեղարուեստական յայտագիր


**ՍԻՐՈՎ ԿԸ ՀՐԱԴԻՐՈՒԻՔ**



## ԽՕՍՔԸ ԿԸ ԹՈՒԻ, ԳԻՐԸ ԿԸ ՄՆԱՅ ՅԻՇԱՏԱԿՈՂ



Կիպրարնակ Պրն. Մանուկ Յակոբեան երկու գիրքերով ներկայացաւ կիպրահայ ընթերցասէր հանրութեան՝ «ԿԵԱՆՔԸ ՀԱԼԷՊԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԷՆ ՆԵՐՍ» եւ «ԿԵԱՆՔԸ ԿԻՊՐԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԷՆ ՆԵՐՍ», անոնց անգլերէն տարբերակներուն հետ միասին:



Ուրբաթ, 8 Մարտ 2024-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Կիպրոսի Առաջնորդարանի «Վահրամ Իւրիճեան» սրահին մէջ, տեղի ունեցաւ վերոնշեալ երկու գիրքերու շնորհանդէսը:

Պարոն Վրէժ Զաքարեանի բացման կարճ խօսքէն ետք, խօսք առաւ հեղինակը, Պրն. Մանուկ Յակոբեան, անփոփ կերպով բացատրելով թէ ինչ հանգամանքներու տակ գրած էր իր գիրքերը, նշելով իր ծննդավայր Հալէպը, սպա Պէյրուօթը ուր տեղափոխուեր էին ընտանեօք



երբ ինք պատանի էր, ապա անդրադարձաւ այն վայրերուն ուր գործի բերումով գտնուէր էր ան, մինչեւ իրենց վերջնական հաստատուիլը Նիկոսիա, Կիպրոս: Ան հուսկ շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն անձանց, որոնք սատարեր էին գիրքերուն լոյս ընծայման, ինչպէս նաեւ անոնց, որոնք մասնակից էին շնորհանդէսին:

Գիրքերը իր համով-հոտով, ջերմ անմիջական խօսքերով ներկայացուց Պրն. Վարդան Թաշճեան, յատկապէս շեշտելով որ Մանուկ Յակոբեանի ոճը նոյնինքն Մանուկն է, իր նկարագրային յատկանիշերէն բխող գիծերով, որոնք կը տողանցեն գիրքերու տողերուն ընդմէջէն՝ պարզ ու հասկնալի, պարկեշտ ու յստակ, այլեւ աղուոր հայերէնով, չափազանց անկեղծ, առանց գրական յաւակնութեան, բայց լեզուով մը որ ընթերցողը անմիջապէս կը կապուի գիրքին եւ զայն ձեռքէն չի ձգեր մինչեւ անոր աւարտը: Անոնց բովանդակութիւնը, ըսաւ ան, յետ Եղեռնեան հայ տոհմիկ կեանքի կենցաղային բարքերն ու սովորութիւններն են, դժուարութիւններն ու մարտահրաւերները, որոնք կը ներկայացուին իրերայաջորդ պատմութիւններու մէջ, յատկապէս առաջին գիրքին՝ «ԿԵԱՆՔԸ ՀԱԼԷՊԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԷՆ ՆԵՐՍՅԻ»-ի էջերուն մէջ: Մա այն շրջանն էր, ըսաւ յարգելի բանախօսը, երբ գաղութները կը փորձէին ոտքի կանգնիլ եւ վերադառնալ տեսակ մը բնականոն կեանքի, հեռու իրենց պապենական հողերէն, բայց բարեբախտաբար հեռու թրքական եպթադաններէն, մեզի ասպնջականութիւն տուող ժողովուրդներու գիրկին մէջ, յարաբերաբար խաղաղ երկինքներու տակ: Ներկայացուց կարգ մը հետաքրքրական պատմութիւններ երկու գիրքերէն ալ, որոնք մեր յետ-Եղեռնեան կեանքն են, իր խոովքներով ու վերիվայրումներով, սրտաճմիկ ցաւերով ու տառապանքով...: Վեր առաւ գիրքերուն մէջ տեղ գտած կարգ մը դիպուկ դէմքերն ու դէպքերը, որոնք նոր շունչ առած կը ներկայանան մեզի՝ ընթերցողին, որպէս յուշարարը սպրուած ու չմոռցուած պատմութեան:




Գինեձօնի արարողութիւնը կատարուեցաւ ձեռամբ եւ աղօթքներովը Թեմիս Կաթ. Փոխ. Տէր Խորէն արք. Տողրամաճեանի եւ Տէր Մովսիկ քահանայ Հապէշեանի:

Գինեձօնի արարողութենէն ետք, խօսք առաւ Սրբազան Հայրը, որ նոյնպէս կարելորեց գիրքերու լոյս ընծայումը, քանզի ըսաւ ան «Խօսքը կը թոյ կամ կը մոռցուի, բայց գիրը կը մնայ», որպէս պատմութիւն որ պետք է յիշուի եւ յիշեցուի: Ան նշեց որ Մանուկ Յակոբեանի որդին՝ Սազօն, որպէս Աստուծմէ առաքուած հրեշտակ, թելադրեր էր իր հօր, անոր վաղամեռիկ կնոջ՝ Ռիթա Յակոբեանի ցաւալի մահէն ետք, որ ժամանակն էր որ ան գրի առնէր իր յուշերը, որոնց մասին միշտ խօսեր էր ան: Գրելը մեծագոյն մխիթարանքը պիտի ըլլար այդ ահաւոր կորուստէն ետք եւ միաժամանակ կարելոր ներդրում մը մեր պատմութեան գանձարանին մէջ:

Սրտանց կը շնորհաւորենք Մանուկ Յակոբեանը՝ իր գիրքերու լոյս ընծայման ուրախ առիթով, իրեն մաղթելով քաջառողջ, երկար տարիներ եւ դալար ու բեղուն գրիչ:

Երան Գույումճեան

## 21 ՓԵՏՐՈՒԱՐ 2024-ԻՆ ՎԱԽՃԱՆԵՑԱԻ Տ. ԵՂԻՇԷ Ծ. ՎՐԴ. ՄԱՆԾԻԿԵԱՆ, ՈՐ ՏԱՐԻՆԵՐՈՎ ԾԱՌԱՅԱԾ Է ԿԻՊՐՈՍԻ ԹԵՄԻՆ, ՈՐՊԷՍ ԿԱԹ. ՓՈԽԱՆՈՐԴ 1883-1997 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ



Կենսագրութիւն

**Տ. ԵՂԻՇԷ Ծ. ՎՐԴ. ՄԱՆԾԻԿԵԱՆԻ**

Տէր Եղիշէ Ծայրագոյն Վարդապետ Մանճիկեան ծնած է 1942 թուականին, Քէսապի Գարատուրան գիւղը (Սուրիա): Աւագանի անունն է Արա: Փոքր տարիքին ծնողքին հետ Պուրճ Համուտ (Լիբանան) փոխադրուելով՝ նախնական կրթութիւնը ստացած է Սրբոց Քառասնից Մանկանց Ազգային Վարժարանին մէջ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք ընդունուած է 1956-ին: Աւարտելով Դպրեվանքի Ժառանգաւորացի քառամեայ շրջանը՝ սարկաւազ ձեռնադրուած է 1960-ին՝ ձեռամբ Լիբանանի առաջնորդ Տ. Խորէն Արք. Բարոյեանի:

Ապա, երեք տարի հետեւելով Ընծայարանի դասընթացքներուն՝ կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 26 Մայիս 1963-ին՝ ձեռամբ Հիւսիսային Ամերիկայի առաջնորդ Տ. Հրանդ Արք. Խաչատուրեանի, եւ վերակոչուած՝ Տ. ԵՂԻՇԷ ԱԲԵՂԱՅ:

1963-1965 ստանձնած է Կաթողիկոսարանի մատենադարանի տեսչութիւնը, միանգամայն Դպրեվանքէն ներս դասաւանդելով գրաբար ու հայերէն, իսկ Մարտիկեան Վարժարանէն ներս՝ ֆրանսերէն եւ թուրքերէն:

1965-ին գործուղուած է Նոր Ջուղա (Իրան), որպէս դասախօս Սպահանի պետական համալսարանի հայագիտական ամպլոնին: Նոյն տարիներուն, ան նաեւ դասաւանդած է Նոր Ջուղայի ազգային վարժարաններուն մէջ՝ հայերէն, գրաբար, գրականութիւն, հայոց պատմութիւն եւ կրօնագիտութիւն: Իր մասնակցութիւնը բերած է Նոր Ջուղայի առաջնորդ Տ. Գարեգին Արք. Սարգիսեանի կողմէ կազմակերպուած ուսուցիչներու վերաորակաւորման գիշերային դասընթացքներուն:

1967-ին հիմնած ու կազմակերպած է Սպահանի պետական համալսարանի Հայ Ուսանողական Միութիւնը:

1974-1976 Միացեալ Նահանգներու Գոլումպիա համալսարանէն ներս հետեւած է Միջին Արեւելեան Լեզուներ եւ Մշակոյթներ ճիւղին:



Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Մանճիկեան հովուական պաշտօններ ստանձնած է հետեւեալ շրջաններուն մէջ.-

- 1976-1977 թուականներուն եղած է Լոս Անճելոսի Ս. Խաչ եկեղեցոյ հոգեւոր հովիւը, ուր նաեւ դասաւանդած է Մոնթեպելլոյի Մեսրոպեան Վարժարանէն ներս՝ կրօնք եւ հայ մշակոյթի պատմութիւն նիւթերը:

- 1977-1980 ստանձնած է Էնսինոյի (Լոս Անճելոս) Ս. Նահատակաց եկեղեցոյ հովուութիւնը, ուր հաստատած է Ս. Գիրքի եւ կրօնական գիտելիքներու սերտողութիւն Էնսինոյի երիտասարդութեան համար:

- 1980-1983 նշանակուած է Ֆրէզնոյի հոգեւոր հովիւ՝ միաժամանակ դասաւանդելով Ֆրէզնոյի համալսարանի հայագիտական բաժանմունքին մէջ:

- 1983-1997 Գարեգին Բ. Կաթողիկոսին տնօրինութեամբ նշանակուած է Կաթողիկոսական Փոխանորդ Կիպրոսի Հայոց Թեմին, ուր հաստատած է շաբաթօրեայ հերթական գիշերային դասախօսութիւններու լսարան: Իր օրերուն իրագործուած է Ազգային Առաջնորդարանի շրջափակին մէջ Ապրիլեան Յուշարձանի կառուցումը:

- 1997-2000 նշանակուած է հոգեւոր հովիւ Վանգուվըրի (Գանատա) Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ:

- 2000-2003 ստանձնած է հովուութիւնը Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Նորթ Անտովըրի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ:

- 2004-2007 Անթիլիասի Դպրեվանքէն ներս դասաւանդած է գրաբար եւ հայ մատենագրութիւն:

- 2006-2009 տարիներուն ստանձնած է «*Կիլիկիա*» թանգարանի եւ «*Թռչնոց Բոյն*»ի տեսուչի պաշտօնները:

- 2010-2011 նշանակուած է Ատրպատականի Կաթողիկոսական Փոխանորդ:

Հայր Սուրբին գրական վաստակին կը պատկանին հետեւեալ հատորները.-

ա) Յովհաննէս Օձնեցի - վարդապետական աւարտաճառ:

բ) Դուք Ի՞նչ Կը Մտածէք - զրոյց երիտասարդութեան հետ:

գ) Սուրբ Սահակ Պարթեւ - համառօտ ակնարկ մը երիտասարդութեան հետ:

դ) Անթառամ Շողեր - աղօթագիրք հայերէն եւ անգլերէն:

ե) Գրասեղանիս Թուղթերէն:

զ) Ամօթին Հայկականը - հրատարակուած Ե. Տիգրան գրչանունով:

է) Ոգեղէն ճոպանուղի:

Կիպրոսի թեմէն ներս, ան միայն բարի յիշատակներ կը թողու իր ետին: Իր համեստ ու խոնարհ կերպարը, իր համահայկական ոգին, իր անխտրական մօտեցումը բոլորին հանդէպ, իր արդար վերաբերմունքը բոլորին հետ, անկախաբար անոնց քաղաքական եւ այլ հայեացքներէն, իր խոր եւ փիլիսոփայական միտքերը յաւերժական փայլ մը կը թողուն հոգեւորականի իր անմահ ճակատին: ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՅ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ:

## ԿԻՊՐԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Ճրտրգ. Կարպիս Մինասեան



Նկատի ունենալով հայ-բիզանդական հնագոյն կապերը, շատ հաւանական է, որ շատ վաղ ժամանակներէ Կիպրոս կղզիին մէջ բիզանդացիներու կողքին գոյութիւն ունեցած է հայ գաղութ մը: Մակայն փաստագրական հնագոյն ներկայութիւնը յիշատակուած է 578-ին, երբ պարսիկ Խոսրով Ա. թագաւորին դէմ բիզանդացի զօրավար Մարիկոս Կապադովկիացին արշաւանքի ընթացքին Արզանի մէջ կը գերեզմարէ 10090 հայ եւ անոնցմէ 3350-ը կը տեղափոխէ Կիպրոս: Անոնց ներկայութիւնը եւ ռազմավարական դիրքը հետագային պատճառ կը դառնան շատ աւելի մեծ թիւով հայերու հաստատումին այդ կղզիին մէջ՝ քաղաքական, առեւտրական եւ ռազմական նկատառումներով:

Յիշատակուած են հայկական անուններ, ինչպէս՝ Արմէնոխորի, Արմինու, Քոռնոքիփոս, Պատրիկի, Պլատանի, Սփաթարիքո, որոնք կը ծառայէին բիզանդական իշխանութեան որպէս վարձկան զինուորներ կամ սահմանապահներ: Հետագային Կիպրոսի կղզիին մէջ բիզանդական կայսրութեան ծառայած են հայ զօրավարներ եւ կառավարիչներ, ինչպէս՝ Ալէքսիոս Մուսերէն 868-874 թ., Լեւ Սիմբականացի 910-911թ., Բագիլ Հայկազ 958 թ., Վահրամ 965թ. եւ Էլփիտիոս Վրահամիոս 1075-1085 թ.:

Լեւ Սիմբականացի ձեռնարկած է Լառնաքայի Ս. Ղազար Տաճարի կառուցումը, իսկ 973-ին Խաչիկ Ա. Կաթողիկոսը Նիկոսիոյ մէջ հիմնադրած է Հայոց Եպիսկոպոսութիւն: Իսահակ



Կոմսենուսի եւ Հայոց Իշխան Թորոս II-ի դստեր հարսանիքէն ետք, 1185-ին Կիպրոս կը փոխադրուին հայ ազնուականներ եւ ռազմիկներ, որոնք կը պաշտպանեն կղզին:

Լատինական դարաշրջանին, 1192-ին, երբ Երուսաղէմի Ֆրանք տիտղոսաւոր թագաւոր Գուիտոն Լուսինեան կը գնէ Կիպրոսի կղզին, մեծ թիւով հայ եւ այլազգի հարուստ վաճառականներու, ազնուականներու, ասպետներու եւ ռազմիկներու զանգուածային ներգաղթ մը կը հասնի Եւրոպայէն, Կիլիկիայէն եւ Արեւելքէն՝ հաստատուելով Կիպրոս: Անոնց առատօրէն կը շնորհուին կալուածներ, արտօնութիւններ: Այս երեւոյթին հետ առեւտրական կապերու եւ շարք մը ամուսնութիւններու ընդմէջէն կը ստեղծուի Կիպրոսի Լուսինեան թագաւորութիւնը՝ անքակտելիօրէն կապուած Կիլիկիոյ Թագաւորութեան հետ: Հետագայ ժամանակներուն, հազարաւոր կիլիկեան հայեր ապաստան կը գտնեն Կիպրոս՝ փախչելով մեմլուքեան արշաւանքներէն ու յարձակումներէն: Կիլիկիոյ վերջին թագաւոր Լեւոն 5-րդ 1375-ին կ'ապաստանի Կիպրոս՝ շարունակական անկումներ կրելէ ետք: Իր մահուրէնէ ետք, իր տիտղոսն ու արտօնութիւնները, ինչպէս նաեւ զինանշանը 1396-ին Սուրբ Սոֆիայի տաճարին մէջ կը փոխանցուին իր զարմիկին՝ Ճէյմս Ա.-ին, Լուսինեան թագաւորին:

Հետագային Ֆրանքներու եւ Վենետիկեան յաջորդական ժամանակաշրջաններուն, 1192-1489 եւ 1489-1570 թուական, Նիկոսիա, Ֆամագոստա, Սպատարիկո, Կոռնոկիպոս, Պլատինի եւ այլուր կը գտնուէին հայկական եկեղեցիներ ու հայերէնը Կիպրոսի պաշտօնական լեզուներէն մէկը կը համարուէր: Նիկոսիոյ հայերը ունէին իրենց առաջնորդարանը ու կ'ապրէին հայկական թաղամասին մէջ, որ կը կոչուէր «Հայաստան կամ Արմէնոյիթոնիա». իսկ Ֆամակոստա 12-րդ դարէն ունեցած է հայ եպիսկոպոսութիւն, հայերը ապրած են սուրիական թաղամասին շուրջ: Փաստագրուած է ներկայութիւնը հայկական վանական կարեւոր համալիրի մը, որպէս Աստուածաբանական կեդրոն եւ վանք, ուր սորված է Ս. Ներսէս Լամբրոնացի 1153-1198 թուականներուն. վանքը նախքան եղած է Հալեգայի մօտ գրտնուող Ս. Մակարիոսի դպտի վանքը եւ 1504 թուականներուն ճանչցուած է որպէս Բենեդիկտեան Տաճարի «Նոթր Տամ Տէ Տիր» կամ «Տորտոսա» մայրապետանոց, Նիկոսիա:

Երբ կղզին Օսմանեան ժամանակաշրջանին՝ 1570-1571, գրաւուեցաւ, 40000 թրքական բանակէն վերապրած հայ արհեստաւորներ հաստատուեցան Կիպրոս, մասնաւորաբար Նիկոսիա, ուր ճանչցուած էր հայկական առաջնորդարանը որպէս ցեղային մեծլիս եւ ջնջուած էր Ֆամակոստայի եպիսկոպոսութիւնը:

Քաղաքը պարսպապատ էր, իսկ իսլամներու մուտքը՝ արգիլուած: Հայերը լուծուած էին հասութաբեր արհեստներու եւ աշխատանքի, որոնց շնորհիւ բարգաւաճ դարձուցին քաղաքը: 17-րդ դարու սկիզբը, Կիպրոս հաստատուեցան նաեւ պարսկահայ մետաքսի վաճառականներ: 18-րդ եւ 19-րդ դարերուն Նիկոսիա հաստատուեցան հարուստ օսմանահայեր, սակայն կիպրահայերու քանակը որոշ անկում արձանագրեց օսմանեան վարչակազմին սահմանած ծանր տուրքերուն եւ խստութեան հետեւանքով: Տակաւին կար ճնշումը կրիպտո(թաքուն)-քրիստոնեաներ (Linobambaki) կամ իսլամներ դառնալու, ինչ որ կը բացատրէ թէ ինչո՞ւ նախկին հայկական գիւղերը, (Արմենոխորի, Արտեմի, Ս.Յակոբոս, Ս. Խարիտոն, Կոռնոկիպոս, Մելոնտան, Պլատանին, Սպատարիկոն) 19-րդ դարու վերջերը բնակուած էին թուրք կիպրացիներով: Այս նեղութիւններուն շարքը համալրուեցաւ նաեւ 1821-ին Յուլիսեան արիւնալի իրադարձութիւններով, որմէ ետք տեղի ունեցան բարելաւումներ՝ այսպէս կոչուած «թանգիմաթի շրջան»-ին՝ 1839-1876, որուն արդիւնքով Հայոց եպիսկոպոսը մասնակցեցաւ վարչական խորհուրդին, հայերը մասնակից դարձան քաղաքացիական ծառայութեան: 1869-ին Սուեզ ջրանցքի բացումը ձեռնտու եղաւ նաեւ հայ վաճառականին, ու անոր վիճակը մասամբ ընդունելի դարձաւ:

1878-ին, անգլիացիներու Կիպրոս ժամանումով եւ իրենց որդեգրած առաջադէմ վարչակարգով, հայկական փոքրաթիւ համայնքը վերստին բարգաւաճեցաւ՝ մասնաւորապէս հայոց լեզուական հմտութեան շնորհիւ: Հայերը ընդունուեցան որպէս թարգմանիչներ հանրային ծառայութիւններու, որպէս տնտեսներ ու աճեցաւ համայնքին թիւը: Օսմանցիներու կողմէ իրականացուած սարսափելի ջարդերուն (1894-1896-1909-1915-1923...) հետեւանքով Կիպրոս լայն բացաւ իր գիրկը՝ ընդունելով աւելի քան 10.000 փախստականներ՝ Զմիւռնիայէն, Կոստանդնուպոլիսէն, Կիլիկիայէն:

Անոնք Կիպրոսը դարձուցին իրենց նոր հայրենիքը եւ դարձան արժանաւոր քաղաքացիներ՝ մշակելով վաճառականութիւն, արհեստներ, ստեղծելով նոր մասնագիտութիւններ, հիմնելով գործեր: Այսպիսով անոնք զարգացուցին կղզիին տնտեսական եւ ընկերային կեանքը:

<http://www.kantsasar.com/news/48686-2/>

## ԿԻՊՐՈՍ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ ՊԻՏԻ ԲԱՆԱՅ



Արտաքին Գործոց նախարար Կոնստանտինոս Կոմպոս, Երեւանի մէջ՝ իր պաշտօնակից Արարատ Միրզոյեանին հետ հանդիպումէ ետք, յայտարարեց յառաջիկայ ամիսներուն, Երեւանի մէջ Կիպրոսի դեսպանատան գործունէութեան սկիզբնաւորութիւնը:

Իր յայտարարութեան մէջ, պարոն Կոմպոս անդրադարձաւ երկ-կողմանի յարաբերութիւններու հոյակապ մակարդակին եւ վստահեցուց կիպրական կառավարութեան պատրաստակամութիւնն ու վճռակամութիւնը անոնց յաւելելալ խորացման համար:

Այս մէկը, ըսաւ ան, մեր հասարակաց պարտաւորութիւնն է, որ կը բխի խոր արմատացած պատմական եւ մշակութային կապերէ, որոնք մշակած են մեր նախահայրերու սերունդները:

## ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

### ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԻ ԿՈՄԻՏԱՍԸ

Գեորգ Նաթալի (Եազըճեան), Երեւան, 29 փետրուար 2024, ԳԵՂԱՐԴ

Փետրուարի 6-ին Երեւանի մէջ սրտի կաթուածով յանկարծամահ եղաւ Գագիկ Գինոսեանը:

Ո՞վ էր Գինոսեան, որու անունը ողջութեան իսկ հոմանիշ դարձաւ հայոց ազգային պարի ժողովրդականացման:



Ծնած էր 1966-ին՝ Ճաւախքի Ախալցխա քաղաքին մէջ: 1990-ին աւարտած էր Երեւանի Փոլիթեքնիք Հիմնարկի Համակարգչային գիտութեան բաժանմունքը: Հիմնարկին մէջ ծանօթանալով հայ ազգագրական երգի նուիրեալ, առասպելական Հայրիկ Մուրատեանին, ընդգրկուած է անոր հիմնած «Վան» ազգագրական երգի-պարի համոյթին մէջ, ինչը ճակատագրական դարձաւ թէ՛ իր եւ թէ՛ առնուազն հայրենաբնակ հայութեան համար: Գագիկ այնքան սիրեց հայ երգն ու մասնաւորաբար պարը, որ իր կեանքի մնացեալ մասն անմնացորդ նուիրեց հայ մշակոյթին: Խորացաւ հայ ազգագրական պարերու մարզին մէջ, թափանցեց անոնց փիլիսոփայութեան խորքերը, պեղեց անոնց իմաստները, զբաղեցաւ բանահաւաքչութեամբ, ժողովուրդէն հատիկ առ հատիկ վերցուց ազգագրական պարերը (շուրջ 40 պար) եւ զանոնք մաքրելով՝ վերադարձուց նոյն ինքն ժողովուրդին: Հիմնեց «Կարին» անանդական երգի-պարի համոյթը, որ տիրական անուն դարձաւ հայ ազգագրական պարի բնագաւառին մէջ:

Սակայն Գինոսեանի մեծագոյն գործն եղաւ հայ ազգագրական պարի հանրայնացումը. ան այդ պարը վար բերաւ բեմերէն եւ ժողովուրդին սորվեցուց զանոնք՝ իբրեւ հայոց ազգային ինքնութեան անբաժան բաղադրատարր: Եթէ «Կարին»ի մէջ երբեւէ պարած տղաքն ու աղջիկները, լաւագոյն պարագային, քանի մը հարիւր հոգի կը կազմեն, Գինոսեանի գործունէութեան շնորհիւ, տասնեակ հազարաւորներ սորվեցան այդ պարերը եւ Գագիկի բացատրութիւններով իւրացուցին անոնց խորքային իմաստները. Գագիկի գիտական հետազոտութեանց շնորհիւ, այդ պարերը դադրեցան սոսկ շարժումներ ըլլալէ, այլ դարձան անբաժանելի հայ նոր սերունդներու էութենէն, անոնց մաշկին նման միահիւսուած անոնց մարմինին, միտքին եւ հոգիին: Բաց դասի վայրերն էին ... Երեւանի հրապարակները կամ որտեղ որ կարելի էր քանի մը տասնեակ հոգի մէկտեղել: Հրապարակներու պարագային, պարողներուն թիւը երբեմն կը հասներ հազարներու:

Գագիկ Գինոսեանի յամառ ջանքերուն շնորհիւ, 2010-ական թուականներուն Հ. Հ.ի դպրոցական ծրագիրներուն մէջ ընդգրկուեցան հայ ազգային երգն ու պարը, իրագործուի մը, որու հսկայական նշանակութեան մասին գրելը անիմաստ է նոյնիսկ:

Գագիկ Գինոսեան նաեւ ազգային գաղափարախօս էր: Իւրացուցած էր յատկապէս, Գարեգին Նժդեհի ազգափրկիչ, ուղեցոյց գաղափարախօսութիւնը՝ անոր գործնականացման մէջ տեսնելով հայ ազգի վերածնունդն ու պայծառ ապագան: Եւ ինք կենդանի օրինակն էր այդ գաղափարախօսութեան կիրառութեան:

Գագիկ Գինոսեան Արցախեան երկու պատերազմներու մասնակից էր: Ազգային հերոս, նահատակ Լեւոնիտ Ազգալդեանի հրամանատարած «Ազատագրական Բանակ»ի կազմին մէջ մասնակցելով առաջին պատերազմին, աչքի ինկաւ ատրպէյճանական երկու զրահամեքենայ «Ֆակոթ» հակահրասայլային հրթիռներով ոչնչացնելով: Իսկ երկրորդ 44-օրեայ պատերազմին ան մասնակցեցաւ ՈՄԱ կամաւորականներու խմբաւորման հետ: Քարվաճառի ճակատին վրայ ՈՄԱ-ն եւ իմ անդամակցած «Ազգային Լեզեոն»-ը հարեւաններ էին: Միասին հոկտեմբերի կեսին, երբ պատերազմը դեռ կը շարունակուէր, երկու օրով եկանք Երեւան: Ճանապարհին ինձի գուժեց «Կարին» խումբի պարողներէն,

հիանալի երիտասարդ Յարութին Ստեփանեանի՝ Մարտակերտի շրջանին մէջ նահատակութեան գոյժը: Երեւան չհասած, մտանք Արովեան քաղաք՝ գլուխ խոնարհելու Յարութինի աճիւններուն առջեւ, յաջորդ օրն ալ մասնակցեցանք հերոսի թաղման: Գագիկ իր սիրեցեալ աշակերտը ճանապարհ դրաւ մարտական «Եարխուշտա» պարով: Ինչ իմանայինք, որ իր անակնկալ մահէն ետք, իր աշակերտներն ու հազարաւոր սիրելիները զինք եւս այս տարուայ փետրուարի 8-ին պիտի յուղարկուորէին նոյն պարով:



### ***Գագիկը իր տարերքին մէջ***

Գագիկին ծանօթացած եմ շուրջ երեք տասնամեակ առաջ: Գաղափարական ընկերներ էինք: Այդուհանդերձ, գլուխ-գլխի հազիւ 10 վայրկեան խօսած ըլլանք իրարու հետ, քանզի միշտ շարժման, աւելի ստոյգ՝ վազվզուքի մէջ էր: Երբ մեր ճամբուն վրայ պատահական կը հանդիպէինք, հազիւ ժամանակ կ'ունենար ... ողջագուրուելու: Ներողութիւն խնդրելով, կը շարունակէր իր վազքը, որ կրնամ անվերապահօրէն անուանել սրբազան առաքելութիւն:

Ոմանց համար կրնայ անընդունելի կամ չափազանցեալ թուիլ Գագիկը հայոց պարի Կոմիտաս անուանելս: Սակայն ան լիովին արժանի է այդպէս կոչուելու՝ նկատի ունենալով հետեւեալ նմանութիւնները հայ երգի տիտանին հետ.

– Բանահաւաքչութիւնը. Եթէ Կոմիտաս հայ գիւղացիէն ու քաղաքացիէն պատառիկ առ պատառիկ հաւաքեց հայ երգը, նոյնը Գինոսեան կատարեց հայ ազգային ու ազգագրական պարերուն հետ:

– Կոմիտաս զտեց ու մաքրեց մեր երգերը օտարամուտ տարրերէն: Նոյնը կատարեց Գինոսեան հայ պարին հետ: Օրինակ, հիմնովին դուրս շարտեց ծեքծեքումները, մարմինի զանազան մասերու (յատկապէս կոնքի) անհարկի շարժումները, զանոնք փոխարինելով իսկական հայկականներով, մասնաւորաբար, ծունկերու զսպանակային շարժումներով:

– Այս բոլորէն ետք, Կոմիտասի նման, Գագիկ նոյն այդ պարերը, արդէն մաքրուած-բիրեղացած, ոչ միայն վերադարձուց անոնց տիրոջը՝ հայ ժողովուրդին, այլեւ նոյն այդ



պարերը հնարաւոր բոլոր միջոցներով ստրկեցուց նոր սերունդներուն: Այսօր էթէ հայ ազգային պարը ժողովրդային լայն համակրութիւն եւ կիրառում ունի Հայաստանի Հանրապետութեան մէջ, այդ հիմնականին մէջ կը պարտինք Գագիկ Գինոսեանի անձնուէր ջանքերուն: Փաստօրէն, ան ստեղծեց հայ պարի համազգային դպրոց, ուրկէ շրջանաւարտ եղան ու իրենց մեծ ուսուցիչին գործը կը շարունակեն տասնեակ հազարաւորներ:

Ահա թէ ո՛ր է ակունքը այն անսահման վիշտի, յարգանքի ու սիրոյ, որ մեր ժողովուրդը ցուցաբերեց Գագիկի մահուան առթիւ: Հազարաւորներ եկած էին Երեւանի Նոր Նորքի Ս. Մարգիս եկեղեցի, յաջորդ օր՝ Մենեկային երաժշտութեան ստուն, ապա Եռաբլուր՝ գլուխ խոնարհելու Գինոսեանի դագաղին եւ արժանաւորապէս յուղարկաւորելու այս Մեծ Հային:

Գագիկ Գինոսեանի պայծառ անունը յաւերժ պիտի մնայ հայ ազգագրական պարի պատմութեան մէջ:

Իմ խնդրանքն է, որ Եռաբլուր այցելողներ անպայման գլուխ խոնարհեն հայոց պարի եւ նժողեհեան ոգիի Մեծ Ուսուցիչի լոյս շիրիմին առջեւ:

## ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՐՏԻԿԸ՝ ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇԵԱՆ

(1906-1944)

*Հոգիս բուրվառ է մշտավառ, ուր կը ծխան սերերս համայն,*

*Կը խնկարկեմ ես զայն կեանքի տաճարին մէջ յաւերժական,*

*Բազմահազար հաւատացեալ ամբոխներու երեսն ի վեր,*

*Ու կը ժողվեմ անոնց դէմքէն հաւատամքի լոյսեր տարբեր... (Միսաք Մանուշեան)*

Դոկտ. Մինաս Գոճայեան, 22 Փետրուար, 2024

Ազատութեան մարտիկի սերերն էին հայրենիքը, համերաշխ մարդկութիւնը, ազատութիւնը եւ իր մի հատիկ սերը՝ Մելինէ Մանուշեանը:



Կեանքի ի՛նչ ծաղրանք: 1944 թ., նացիստական Գերմանիան ամէն կողմէ յարձակումներու տակ է, մէկ կողմէն Արեւմտեան միլիոնանոց բանակները, միւս կողմէն Խորհրդային յաղթական զօրքերը, որոնց մէջ իրենց սխրագործութիւններով կը փայլէին ու դեռ պիտի փայլէին հազարաւոր հայորդիներ: Անոնք քանի մը

ամիս ետք հայկական քոչարի պարը պիտի ներկայացնէին Պունտստակի առջեւ (խորհրդարան): Այո՛, ընդամենը ամիսներ մնացեր էին որ նացիստական զօրքերը իրենց մշակութային աւարներով պիտի հեռանային Փարիզէն, 1944 թուականի Փետրուար2-ին ստորնաբար պիտի կտրէին Միսաք Մանուշեանի եւ իր զինակիցներուն կեանքի թելերը:



Մինչ նացի ոճրագործները կրնակնին Էյֆելի աշտարակին դարձուցած ու գրեթէ բարոյալքուած փախուստ կու տային, ասդին քսանեակ մը ազամարտիկներ իրենց պայծառ դէմքերը թշնամիին հրացաններուն դարձուցած հերոսաբար մահը կընդունէին...

Կեանքի հեգնանք չէ՞ միթէ այս:

Միսաք Մանուշեան եւ իր գլխաւորած խումբը մտան յաւերժութեան գիրկը եւ նկատուեցան նացիզմի ու ֆաշիզմի դէմ պայքարի «անլռելի զանգակատուններ»: Երգեր գրուեցան, բանաստեղծութիւններ ու ներբողներ հիւսուեցան, փողոցներ ու հրապարակներ կոչուեցան անոնց անունով: Հայոց հայրենիքին մէջ դպրոց մը կոչուեցաւ Մանուշեանի անունով:

Ազատութեան մերագնեայ մարտիկին մասին երբ կը մտածեմ, կը յիշեմ Միամանթոյի յայտնի տողը.

**«Քու երգերէդ երգ մը տո՛ւր ինձ, ե՛րգ մը, ես երգելով կ'ուզեմ մեռնիլ...»**

«Աշուրներուն կայծը երկինքի աստղերէն» առած բանաստեղծ ազատամարտիկը վաղուան արշալոյսի յոյսով ընդունեց փախչող թշնամիին գնդակը: Արդարեւ, իր վերջին նամակին մէջ ան կը գրէր. «Ազատագրական բանակին ես միացած եմ իբրեւ կամաւոր եւ այժմ կը մեռնիմ յաղթանակին ու նպատակներուս մէկ քայլ մնացած: Մահուան պահին ես կը յայտարարեմ որ ոչ մէկ ատելութիւն ունիմ գերմանացի ժողովուրդի կամ որեւէ ուրիշի նկատմամբ»: Իսկական հայ մը եւ վաւերական միջազգայնական մը կրնար այսպէս արտայայտուիլ:

Յեղասպանութեան տարիներուն 9-10 տարեկան էր պատանի Միսաք: Հայրը կը սպաննուէր 1915-ին, յետոյ կը մահանար նաեւ մայրը: Միսաքն ու եղբայր՝ Կարապետը կը յաջողին փրկուիլ: Յետոյ կը յաջորդեն «մանկութիւն չունեցող» մարդոց տարիները: Լիբանանի Ճիւնիի ֆրանսական որբանոցին մէջ կը սորվի ֆրանսերէն ու անյագօրէն կը կարդայ: Ինքնագարգացումը կըլլայ իր կրթական հաստատութիւնը: 1925-ին եղբօր հետ կը փոխադրուին Մարսէլ: Աշխատանքի ծանր տարիներ, Միթրոյենի գործարանը կու տայ «կտոր մը հաց»: Կը փոխադրուի Փարիզ, ուր ամբողջ էութեամբ ձախակողմեան (համայնավար) Միսաք կը գտնէ իր նման ֆրանսացի եւ օտարազմի ապաստանեալներ: Կը սկսի Մանուշեանի յեղափոխական վերելքի շրջանը, մանաւանդ գերմանական ուժերու Ստալինկրատի մէջ կրած ջախջախիչ պարտութենէն ետք:

Մանուշեան կը հիմնէ «Ստալինկրատ» ընդհատակեայ խումբը՝ հանդիսանալով անոր հրամանատարը: Յեղափոխական հայորդին միաժամանակ կը զբաղի նաեւ ինքնագարգացմամբ, կը յաճախէ Սորպոն որպէս ազատ ունկնդիր, կը հիմնէ «Զանգու» գրական մշակութային պարբերականը, կը տպուի Արշակ Զօպանեանի «Անահիտ» բարձրամակարդակ գրական ամսագրին մէջ եւ կը ճանչցուի որպէս վաւերական բանաստեղծ:

Այս ընթացքին ան կը ծանօթանայ Մելինէ Աստուրեանին, նոյնպէս Յեղասպանութենէն փրկուած հայուհի մը՝ ձախակողմեան հակումներով հայուհի մը (ծնած 1913-ին): Ամբողջ Եւրոպայի մէջ կը տիրէր վառողի խանձող հոտը: 1941-1943 տէր եւ տիկին Մանուշեանները իրենց յիսնեակ մը մարտընկերներով եւ ընդհատակեայ յանդուգն բազմաթիւ



գործունէութիւններով (56 յարձակում, 150 զոհ, 600 վիրաւոր) կը դառնան Կեսթափոյի ամենէն փնտռուած խմբակներէն մէկը: Դաւաճանի մը պատճառով 1944-ի Նոյեմբերին ֆրանսական ոստիկանութիւնը կը ձերբակալէ խումբը եւ կը յանձնէ հիթլերեան գրաւող ուժերուն: Մելինէն կը յաջողի խոյս տալ: 23 ազատմարտիկներու խումբը կը դատապարտուի գնդակահարութեան, որ ի կատար կ'ածուի Փետրուար 21-ին:

Միսաք Մանուշեանի խումբը եւ կատարած հերոսական գործողութիւնները կը հանդիսանան Ֆրանսայի դիմադրական շարժման ամենէն փայլուն դրուագներէն մէկը, հետեւաբար բոլորովին պատահական չէ, որ Բ. Պատերազմի վերջերանները, որոնց միացած էին նաեւ հայ վերջերանները (les anciens combattants) Ֆրանսայի զանազան քաղաքներու մէջ փողոցներ եւ հրապարակներ կոչեցին իր անունով, եւ կիսանդրիներ կամ կոթողներ կանգնեցուցան երկրի զանազան վայրերու մէջ:

Տողերուս հեղինակին համար Մանուշեանի անունը սերտօրէն կ'առնչուի մեր ընդարձակ ընտանիքի քեռայր նկատուած եւ սիրուած Մարսէլէն Հայաստան ներգաղթած կեսարացի Յակոբ Միմիթեանի հետ, զոր կ'նքած են Ժան Սետալ գաղտնանունով եւ եղած է յաջողակ կապաւոր մը Մարսէլի եւ Ֆրանսայի հարաւի մէջ: Յաճախ իրմէ լսած եմ մեր անզուգական հերոսի մարդկային բնածին իմաստութեան մասին:

Ես առիթ ունեցած եմ նաեւ յաճախ հանդիպելու Մանուշեանի հերոսուհի այրիին՝ Մելինէին հետ: Ան յաճախ կ'այցելէր Փարիզի մէջ բացուած «19-րդ դար» (Le XIXeme siècle) հնագրավաճառի գրախանութիւնը՝ լաւ ծանօթներ ըլլալով տիրոջ՝ Սարգիս Պողոսեանի հետ: Ի հարկէ մեր զրոյցներուն մէջ Միսաք Մանուշեան միշտ ներկայ էր: Մելինէն հիասթափուած էր Խորհրդային Հայաստանէն եւ վերադարձած Փարիզ: Միշտ կը յուզուէր ան, այն աստիճան որ օր մը Սարգիս բարեկամական յանդիմանութեամբ մը ըսաւ. «Հոս նայէ Մելինէ, յուսամ ուրիշ տեղ չես յուզուիր: Միշտ յիշէ որ Մանուշեան քեզի կը հետեւի շուքի մը պէս: Միսաքը պիտի չուզէր քեզ այսպէս տեսնել. եղա՛ւ անուշիկս...»: Յաջորդ անգամ կը կրկնուէր նոյն տեսարանը:

Այս տարուայ Փետրուար 19-ին Ֆրանսայի պետութիւնը արժանին մատուցեց իրեն համար պայքարած ու զոհուած հայ ժողովուրդի մեծ զակին՝ բարձր մակարդակով իրականացնելով Միսաք եւ Մելինէ Մանուշեաններու վերայուղարկաւորութիւնը: Անոնց աճիւնները այժմ կը հանգչին Փարիզի Պանթէոնին մէջ՝ Վոլթերի, Վիկտոր Հիւկոյի, Ալեքսանտր Տիւմայի ու Տէր եւ Տիկին Քիրիներու կողքին: Ֆրանսան իր արժանին մատուցեց հայ ժողովուրդի այս անբաժանելի ամուլին:

Շնորհակալութի՛ւն Ֆրանսա:

## Ի ԴԵՄՍ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԱՆԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

### ՀԱՅՐԵՆԻ «ՇԵՐՈՍ»ՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒ ՎՐԱՅ

### ԿՐԻՏԱՆԱԳՐԵՆ ՊԱՏՈՒԱԲԵՐ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարոյր Յ. Աղպաշեան



Հայաստանի ներքաղաքական, կառավարական, ընդդիմադրական եւ առհասարակ այդ գոյավիճակներով զբաղիլը կամ անդրադառնալը անոնց հոլովոյթներուն, տեղաշարժերուն թէ զարգացումներուն, ներքին թէ արտաքին ազդակներով, այլեւս դարձած է «պարապ վախտի խաղալիք»ի տրամաբանութեամբ անհերթելիութիւն մը, անտեղի մտամարզանք մը:

Անշուշտ, մեր այս դիտարկումը, եովին ու հիմնովին կը բացատրուի համայն հայութեան հետ առնչուած հետաքրքրութիւններուն, մասնակցութիւններուն եւ կողմնակալութիւններուն, նկատի ունենալով այն բոլոր սպիներն ու վերքերը, սայթաքումներն ու այլանդակութիւնները, անախորժութիւններն ու ապիկարութիւնները, որոնք ամենօրեայ դրութեամբ կը պարզուին բոլոր մակարդակներու ու բոլոր հորիզոնականներու վրայ:

Խօսքը, բնականաբար, այս պարագային կը պատկանի Հայաստանին, հայրենի իրականութեան, իր տատամտոտ, վարանտոտ ու կմկմող քաղաքականութեամբ ու գործելաձեւերով, որոնք, մինչեւ օրս, կարելի չէր յայտնուէր գոյութենականութեան ու հաստատակամութեան տալ ամուր եւ յուսադրիչ երաշխիքներ, անկախութեան երթը նուիրագործելու եւ յաւերժացնելու առումներով:

Թող ոչ ոք ցնցուի մեր այս ակնարկութենէն, ոչ ալ փնտռէ «քաւութեան նոխազ»ներ, որովհետեւ, եթէ մենք՝ դուրսէն դիտող, հետեւող կամ արձագանգող ենք տեղի ունեցող մտահոգիչ եւ անընդունելի այս կամ այն երեւոյթներուն, անդին կայ հայրենի ժողովուրդը, որ մերթ կ'ապրի մղձաւանջ, մերթ օրհասութիւն, մերթ ճգնաժամութիւն, մերթ ալ հոգեվարութիւն, երբ կը տեսնէ թէ ինչ կը կատարուի իր երկրին մէջ եւ ո՞ր էին եւ ո՞ր են զինք պաշտպանողները ու ժողովրդային շահերուն զօրակիցները:

Վերջերս (եւ ոչ միայն անգամի մը համար), պատահաբար, դիմատետրեան էջէ մը ականջալուր դարձայ հայրենի պարզ քաղաքացիի մը խիստ ուսանելի ու խոհաշունչ խօսքերուն, որոնք ոչ միայն զգաստացնող էին, այլեւ՝ սաստող, ի տես հայրենիքը պարպող, տուն եւ օճախ, հող ու հարազատներ թողքողներուն, իրաւացի պտոթկումով ու բուն ընդվզումով, որուն լոյսին տակ, ակամայ սկսայ մտածել, թէ այդ կարգի հայորդիներ ու հայրենակիցներ, ինչո՞ւ օրին չփորձեցին հակազդել, զսպել կամ արգելակել նման տմարդի, օտարոտի ապահայ նկրտումներու զագրանքներուն եւ «ստրուկ»ը դարձան ոմանց այլամերժութիւններուն ու խաբեբայութիւններուն, ընդհուպ՝ դառնալով... կոտորաւոր դաւաճաններ:

\*\*\*

Մեր այս գրութիւնը երբեք չի միտիր դեգերիլ այդ նողկալի ու գարշելի արահետներուն մէջ, որոնց անդրադառնալը կամ անոնց արձագանգելն իսկ այլեւս անհանդուրժելի է:

Պարզ է, հայրենիքը տեսնել նման մոայլութեան մը մէջ, իր բազմակողմանի ու բազմատեսակ տուեալներով, ուր պետութիւն ու ժողովուրդ, մեծամասնութեամբ, կը գտնուի



հակոտնեայ բեւեռներու, պետութիւն-եկեղեցի թշնամական դիրքերու, իշխանութիւն-ընդդիմութիւն զիրար «բզքտելու» հրապարակներու վրայ, ալ ինչպէ՛ս կ'անկալուի, որ հայրենիքը կրնայ, համապետական ու միջպետական մակարդակներու վրայ գրաւել յարգելիութեան եւ համակերպութեան ընդունելութիւններ:

Այս բազմակուտակ ու բազմակողմ ճիւղերուն վրայ, ուր «հաստատուած» են խայտաբղետ ու ձախորդաբեր «ուրուականներ», իրենց զանազան պատկանելիութիւններով, ծառայութիւններով եւ առընչութիւններով, եթէ ձերբազատումի, ազատագրկումի կամ վերափրկումի փորձ մը կատարուի կամ այդ ցանցով կարելի ըլլայ կայունութեան ափ մը հանգրուանիլ, շատ յստակ է, նման ու վերոյիշեալ կարգախօսներով ու գործարքներով, անկարելի պիտի ըլլայ հասնիլ հոն՝ ուր կ'ուզենք տեսնել Հայաստան-հայրենիքը:

Սակայն, լաւ կ'ըլլայ, զէթ այս հանգրուանին կամ առիթով, Հայաստանի «խառնակ» վիճակը պահ մը մէկ կողմ ձգենք եւ ակնարկ մը նետենք այն յաջողութիւններուն, յառաջդիմութիւններուն ու նուաճումներուն վրայ, որոնք կ'արձանագրուին բազմաթիւ մարզերու մէջ, յատկապէս միջազգային ոլորտներէ:

Խօսքը կը վերաբերի մարզական, մշակութային, գիտական, մտային, կրթական, պարային, ստեղծագործական, ճատրակային բնագաւառներէն ներս այն պատուաբեր իրագործումներուն, յաղթանակներուն ու մրցանակներուն, որոնց ակնդիր կ'ըլլայ հայութիւնը, խոր ցնծութեամբ, անհուն գոհունակութեամբ եւ անսահման լիութեամբ:

Այդ բոլորը մեզ կը վերյիշեցնեն, արդա՛ր հպարտութեամբ, Խորհրդային օրերուն հայերուն գրաւած թռիչքներն ու սխրանքները, թե՛ Խորհրդային Միութենէն ներս, թե՛ արտասահմանեան երկիրներէն, ուր հայկական ներկայացուցիչները լսելի ու դրոշմելի կը դարձնէին իրենց ազդու ներկայութիւնները, իրենց ձեռք ձգած բարգաւաճութիւններով, մակարդակութեամբ եւ որակաւորութեամբ, զարմանք ու հիացմունք պատճառելով համայն աշխարհին, որպէս արժանաւորութեանց եւ օրինակելիութեանց ցայտուն նմոյշներ:

Անկասկած, այն փառքերը եւ վարկերը, համբաւներն ու հռչակները, անուններն ու համարումները, որոնց արժանացան հայերը, իրենց մարզերէն ներս, եթէ կը պարտին յատենի Խորհրդային Միութեան կարգերուն ընձեռած քաջալերական պայմաններուն, հոգատարութեանց ու հովանաւորութեանց, բայց, նոյնքան ալ ուշագրաւութիւն էր, հայ թեկնածուներուն ունեցած ունակութեանց եւ հզօրութեանց, շնորհալիութեանց ու բարեմասնութեանց, կարողութեանց ու փորձագիտութեանց յատկանիշները, որոնցմով անոնք կրցան իրենց գոյութիւնները արժեւորել եւ բոլորին վստահութիւնները շահիլ:

Ո՞վ կրնար չհպարտանալ, չոգեկոչուիլ, նոյնիսկ չներշնչուիլ (օրինակի համար)

- Տիգրան Պետրոսեաններով (ճատրակ)
- Ալպէր Ազարեաններով (մարմնամարզանք)
- Արամ Խաչատուրեաններով (երգահան)
- «Արարատ»ով (ֆութպոլ)
- Պարոյր Մեւակներով (բանաստեղծ-բանասէր)
- Վահան Փափազեաններով (դերասանապետ)
- Ֆրունզիկ՝ Միեր Մկրտչեաններով (կատակերգակ)
- Գոհար Գասպարեաններով (երգարուեստ)
- Վիքթոր Համբարձումեաններով (աստղագետ)
- Կարէն Դեմիրճեաններով (պետական գործիչ)

Շա՛րքը, այնքա՛ն շատ եւ անթիւ է, որ, նման սիւնակներու մէջ զանոնք խտացնել, մէկտեղել կամ ամփոփել, անհնարութիւն է, բայց, անոնցմէ ամէն մէկը տիտան մըն էր, տաղանդ մը, հանճար մը, որոնք մեր պատմութեան սերունցն ու մեղրն էին, դափնին ու կաղնին, ինքնութիւնը եւ էութիւնը, մէկ խօսքով մեր ամբողջ իրականութիւնը, երէկուան, այսօրուան ու վաղուան հաշույն, պայմանով որ գիտնանք, անոնց մեծութեամբ, անկրկնելիութեամբ եւ



նգեշնչութեամբ, խորաչափել այն արժեչափերն ու չափանիշները, որոնք հայութեան գոյամարտին մէջ կրնան դառնալ մնայուն խարիսխներ եւ անփոփոխելի պատուանդաններ: Ինչո՞ւ այս արագ հպումն ու գրանցումը, պարզապէս ցոյց տալու համար, որ հայ ժողովուրդը, ո՞ր ալ գտնուի եւ ո՞ր ալ բաբախէ իր հոգին, կրնայ «հպարտական ուստումներ»ով շարժիլ ու գործել, «ցեղին ձայն»ը միշտ պահելով հնչեղ ու զրնգուն:

Ահաւասիկ, այսօր, երբ հայրենիքը կ'անցնի դժուարագոյն ու դաժանագոյն պայմաններէ, ուր պետական-կառավարական նախախնամութիւնը, հոգատարութիւնն ու ինսամատարութիւնը, մեղմ ըսած, այնքան ալ բաւարար ու զգալի չեն, ո՞վ պիտի կազմակերպէ, հովանաւորէ, ու ֆինանսաւորէ մեր նոր սերունդին ԿԱՐՈՂԱԿԱՆ, ԶԳՏՈՂԱԿԱՆ, ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ, ՅՈՒՅԱԴԴԱԿԱՆ ու ՏԱՂԱՆԴԱԲՈՐԱԿԱՆ արժանիքները, զանոնք լոյսին բերելով, արժեւորելով ու զօրակցելով անոնց դէպի բարձունք երթին, հայութեան անունն ու հրայլքը, վարկանիշը ու ցուցանիշը դէպի վերելք պահելու վճռակամութեամբ:

Վստահաբար, հայրենի մեր արժանաւոր հայորդիներուն մօտ, ոչ միայն իրենց նախորդներուն ժառանգորդները դառնալու միտումները իրենք զիրենք կը խօսեցնեն, այլ՝ տիրող ներհայրենական ու միջշրջանային դէպքերու ահագնութիւնները կը մղեն, ցոյց տալու հայու այն «ջիղն ու ծուծ»ը, որմէ տեղեակ չեն ուրիշները եւ օտարները, իսկ այս բոլորը ապացուցելու եւ յայտնագործելու համար, իրենք ունին կամքն ու տեսիլքը, հանուր աշխարհին ըսելու.

Մենք կանք, պիտի մնանք ու գոյատեւենք,

Որովհետեւ մենք հայ ենք, մեր գործով ու կեանքով,

Մենք ազնիւ ժողովուրդի մը ժառանգորդներն ենք

Մեր հայրենական հողերուն ու սահմաններուն

Քաջասիրտ եւ աննկուն հովիւները մնալով:

Չեմ գիտեր ինչպէ՞ս եւ ի՞նչ տարողութեամբ հայ ժողովուրդը կը հետեւի ու հետեւեցաւ վերջին տարիներուն եւ յատկապէս վերջին շաբաթներուն, մեր հայ մարզիկներուն, ճատրակիստներուն, արուեստագէտներուն գերփայլուն առաջնութիւններուն, որոնք սիրտ կը լեցնեն ու հոգի կը բուրեն, այլապէս ալ՝ ինչպէ՞ս ընկալուեցան այս յաղթանակները, երբ հայրենիքի մէջ, տակաւին ամէն ինչ գլխիվայր մնալու թաւալզոտութեան մէջ է:

Ի դէպ, մեր նորօրեայ «հերոս»ները, որոնք մեծ յաղթանակներով կը վերադառնան հայրենիք, իրենց կրծքին Ազգային դրօշակը եւ վզին՝ մետալները, հետաքրքրական է, պետական-կառավարական ներկայացուցիչները ո՞ր են եւ ինչո՞ւ մեծ, համաժողովրդական կարգերով եւ ընդունելութիւններով չդիմաւորեցին զանոնք, գէթ յիշատակը եւ յարգանքը պահելու այն նահատակներուն, որոնք 2020էն ի վեր, կրկնակիօրէն ու բազմակիօրէն... կը վերագոհուին:

(Պէլրութ)

22/2/2024



## ԹՈՒՐՔԻԱ Կ'ԱՐԳԻԼԷ ԵՐԿԻՐ ՍՈՒՏՔԸ ԱՅՆ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐՈՒՆ, ՈՐՈՆՔ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵՆ ՆԱԽԱԳԱՀ ԷՐՏՈՂԱՆԸ

Յարույթ Մասունեան

«Քալիֆորնիա Քուրիըր»

[www.TheCaliforniaCourier.com](http://www.TheCaliforniaCourier.com)

Թուրքիոյ կառավարութիւնը՝ բռնապետ ղեկավար Ռեչեփ Թայիփ Էրտողանի գլխաւորութեամբ, արգիլած է մուտքը՝ 150 երկիրներէ աւելի քան 100 հազար օտարերկրացիներու, որոնց շարքին՝ լրագրողներ եւ ակադեմիկոսներ, միայն այն պատճառով, որ անոնք քննադատական տեսակէտներ արտայայտած են կառավարութեան մասին:



Ասիկա ժողովրդավարութեան ամենէն հիմնական սկզբունքի՝ խօսքի ազատութեան խախտում է: Նաեւ՝ ՆԱԹՕ-ի եւ Եւրոպական խորհուրդի Թուրքիոյ անդամակցութեան չափանիշներու խախտում է, որ հիմնուած է «ժողովրդավարութեան, մարդու իրաւունքներու եւ օրէնքի գերակայութեան ընդհանուր արժէքներու վրայ»:

Այսուամենայնիւ, ո՛չ ՆԱԹՕ-ն, ո՛չ ալ Եւրոպական խորհուրդը կը քննադատեն Թուրքիան՝ իրենց վեհ սկզբունքներուն բազմաթիւ եւ երկարատեւ խախտումներուն համար: Նոյնիսկ այն ատեն, երբ Մարդկային Իրաւունքներու Եւրոպական դատարանը, որ Եւրոպական խորհուրդի մէկ մասն է, կ'որոշէ, որ Թուրքիան մեղաւոր է նման իրաւունքներու խախտման մէջ, Թուրքիոյ կառավարութիւնը պարզապէս կ'անտեսէ Դատարանի վճիռը եւ կը մերժէ վճարել սահմանուած դրամական տուգանքը, թէեւ անոր վճիռին ենթարկուիլը պարտադիր է բոլոր անդամներուն համար:

Շուէտ բնակող թուրք հետաքննող լրագրող Ապտուլլահ Պոզքուրթ բացայայտած է թրքական արգելքը Nordic Monitor-ի՝ «Թուրքիոյ գաղտնի սեւ ցուցակը կը թիրախաւորէ օտարերկրացի քննադատները մուտքի արգելքներով եւ արտաքսումներով» խորագիրը կրող յօդուածին մէջ:

Թուրքիոյ կառավարութեան գաղտնի տուեալներու ցուցատախտակին վրայ արգիլուած օտարերկրացիները կը նշուին G ծածկագրով, որուն կը յաջորդեն երկնիշ թիւեր՝ նկարագրելով այն յստակ պատճառները, որոնք կը սահմանափակեն այդ մարդոց երկիր մուտքը:

«G-87 սահմանափակման ծածկագիրը, թերեւս, օտարերկրացիներու համար ամենէն յաճախակի օգտագործուող նշումն է, որ կը նշանակէ, թէ այս ծածկագիրով պիտակաւորուած անհատը սպառնալիք կը նկատուի հանրային ընդհանուր անվտանգութեան համար: Նման դասակարգում մը հիմնաւորող ենթադրեալ ապացոյցները յաճախ կը բխին հետախուզական աղբիւրներէ կամ ռիսքային խումբի մը կողմէ, որ պատասխանատու է օղակայաններ կամ սահմանային անցման կէտեր հասնող ճամբորդները գննելու գործով», կը պարզաբանէ Պոզքուրթ:



Անտեղեակ օտարերկրացիները իրենց արգելքին մասին կը գիտնան միայն թրքական օդակայան ժամանելէ ետք: Անոնցմէ քանի մը հոգիին կ'արգիլեն մուտք գործել, իսկ միւսները՝ կը ձերբակալեն: Անոնց դէմ արգելքի պատճառը կրնայ ըլլալ նոյնքան անմեղ, որքան ընկերային ցանցերու վրայ հաղորդագրութիւն տեղադրելը կամ զայն հաւնիլը: Մահմանափակող միջոցները կը խախտեն ոչ միայն այդ մարդոց իրաւունքները, այլ նաեւ Թուրքիոյ սահմանադրութիւնը, քանի որ նման արգելքներ թոյլատրող օրէնքներ ընդունուած չեն:

Օտարերկրացիներու մասին տեղեկութիւնը կը հաւաքուի անվտանգութեան գլխաւոր տնօրէնութեան (Emniyet) եւ Ազգային հետախուզական կազմակերպութեան (MIT), կամ արտերկրի Թուրքիոյ դեսպանատուներու դիւանագետներու կողմէ, որոնք կը վերահսկեն բոլոր անոնք, որոնք քննադատական մեկնաբանութիւններ կ'ընեն Էրտողանի կառավարութեան մասին: Իրավիճակը աւելի կը բարդանայ, երբ այդ օտարերկրացիներէն ոմանք կ'անուանուին ահաբեկիչներ, առանց որեւէ ապացոյցի, պարզապէս Թուրքիան քննադատելուն համար:

2019ին, ներքին գործերու նախկին նախարար Սուլէյման Սոյլու հրապարակաւ նախագուշացուց. «Եւրոպայի մէջ, յատկապէս Գերմանիա, կան մարդիկ, որոնք կը մասնակցին ահաբեկչական կազմակերպութիւններու հանդիպումներուն, ապա կու գան Անթալիա, Պտորում եւ Մուկլա (առողջարանային քաղաքներ), հանգստանալու համար: Մենք նախագուշակական միջոցներու ձեռնարկած ենք...: Թող գան, տեսնենք, արդեօք կրնա՞ն դիւրութեամբ մուտք գործել (երկիր): Այդքան ալ դիւրին չէ: Մենք կը ձերբակալենք զանոնք եւ եւ ետ կը դրկենք»:

Հակասականօրէն, Էրտողանի կառավարութիւնը դիւրացուցած է «Իսլամական պետութեան» անդամ իսկական ահաբեկիչներու մուտքը՝ Թուրքիա: Պոզքուրթ կ'աւելցնէ, որ «2012ին, Էրտողան անձամբ օգնած է Ալ-Քայիտայի երբեմնի հովանաւորին մուտք գործել Թուրքիա՝ հակառակ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի կողմէ անոր դէմ սահմանուած արգելքին եւ քանի մը անգամ զաղտնի տեսակցած է անոր հետ, Սթամպուլի եւ Անգարայի մէջ»:

Երբեմն թրքական կառավարութիւնը կը ձերբակալէ ամբողջովին անմեղ օտարերկրացի այցելու մը՝ ուրիշ երկրէ մը քաղաքական օգուտներ կորզելու կամ բանտարկեալներ փոխանակելու նպատակով: Թրքական նմանօրինակ շանթած մը տեղի ունեցաւ, երբ նախագահ Էրտողան հրամայեց ձերբակալել ամերիկացի հոգեւորական Էնտրիւ Պրանսընը եւ առաջարկեց զայն փոխանակել մահմետական հոգեւորական Ֆեթուլլահ Կիլենի հետ, որ Թուրքիայէն ԱՄՆ փախած էր՝ Էրտողանի դէմ յեղաշրջում կազմակերպելու կեղծ մեղադրանքներու ենթարկուելէ ետք: Նախագահ Թրամփ մերժեց Կիլենը փոխանակել Պրանսընի հետ եւ Թուրքիոյ դէմ սահմանեց պատժամիջոցներ: Երկու տարի բանտ մնալէ ետք, հոգեւորական Պրանսըն վերջապէս ազատ արձակուեցաւ եւ իրեն թոյլ տրուեցաւ վերադառնալ ԱՄՆ:

Թուրքիոյ կառավարութեան սեւ ցուցակին վրայ յայտնուած մարդոց ընդարձակ ցուցակը շահութաբեր առեւտուր դարձած է իրաւաբանական որոշ ընկերութիւններու համար, որոնք մասնագիտացած են պաշտպանելու մէջ իրաւունքները անոնց, որոնց երկիր մուտքը արգիլուած է: Երբեմն, նոյնիսկ երբ դատարանները յանձնարարած են կառավարութեան՝ հանել անձի մը անունը սեւ ցուցակէն, թրքական կառավարութիւնը մերժած է ընել այդ՝



պնդելով, որ նշեալ անձին ապացոյցները չեն կրնար ներկայացուիլ դատարանին մէջ, որովհետեւ անոնք պետական գաղտնիք կը նկատուին:

Եզրափակելով իր յօդուածը՝ Պոզքուրթ կը գրէ. «Սեւ ցուցակը Էրտողանի կառավարութեան գործիքակազմին մէջ կը ծառայէ իբրեւ գործիք՝ քննադատներու, մասնաւորաբար օտարերկրացի լրագրողներու, գործիչներու եւ իրաւապաշտպաններու դէմ ի գործ դրուած վախազդու արշաւը շարունակելու համար: Արգիլելով մուտքը կամ յանկարծակի արտաքսումներ իրականացնելով, կառավարութիւնը օգտագործած է սեւ ցուցակը՝ սահմանափակելու համար օտարերկրացի լրագրողներու լրագրողական գործունէութիւնը: Վերջին տասնամեակին, օտարերկրացի բազմաթիւ լրագրողներ վնասուած են այս կիրարկումէն՝ իրենց անունները ցուցակին վրայ աւելցած տեսնելու հետեւանքներուն բախելով: Կը թուի, թէ Էրտողանի կառավարութեան պատժիչ իշխանութիւնը պիտի շարունակէ սեւ ցուցակը պահպանել մօտիկ ապագային եւս»:

Այս հարցին պարզ լուծումը այն է, որ օտարերկրացիները պետք չէ մեկնին Թուրքիա՝ որպէսզի իրենք զիրենք պաշտպանած ըլլան հետապնդումէ, արտաքսումէ կամ ձերբակալութենէ: Թուրքիա երթալէն հրաժարիլը մեծ հարուած կը հասցնէ երկրին, որովհետեւ ամէն տարի միլիոնաւոր զբօսաշրջիկներ Թուրքիա կ'այցելեն՝ տասնեակ միլիառաւոր տուարներ ներարկելով Թուրքիոյ սնանկացած տնտեսութեան մէջ:

Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան

Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Լուսինէ Արարատի Աւետիսեան



Վերստին թուղթ աշխարհին

Տեղանունների փոփոխութիւնը ցեղասպանութեան դրսեւորումներից մեկն է, նրա բնական փուլը, ցեղասպանութեան առաւել յստակ եւ կասկածից վեր ցուցիչը: Եթէ մի երկրում համատարած փոխում են տեղանունները, ուրեմն, անկասկած, այնտեղ ցեղասպանութիւն է եղել:

Ցեղասպանութիւնը տարբեր դէմքեր ունի: Եւ նրա դէմքերից որ եւ է մեկը մեւսներից անմեղ լինել չի կարող: Երբ պետականաւրէն ահռելի միջոցներ են ուղղում ուրիշ ազգի պատմական հետքը ջնջելուն, նրա մշակոյթը ոչնչացնելուն,

պատմական յիշողութիւնն անհետացնելուն, տեղանունները փոխելուն, վստահաբար ցեղասպանութիւն է: Բոլոր այս նպատակները հիմնական գործողութիւններին զուգընթաց եւ համընթաց հետեւողականաւրէն կեանքի են կոչում Հայոց բնական թշնամիները:

Բաւական է միայն հարցնել, թէ երբ, ինչու եւ ինչպէս է աշխարհագրական մասնագիտական գրականութեան մէջ «Հայկական բարձրաւանդակ» բազմախաւս, բնութագրական եզրոյթն իր տեղը զիջել արհեստածին «Արեւելեան Անատոլիա» բառակապակցութեանը:

«Ե՛րբ» հարցի պատասխանն ակնյայտ է. հաստատապէս դա եղել է 1915 թուականի ցեղասպանութիւնից յետոյ:



«Ինչո՞ւ»-ի պատասխանը կռահել դժուար չէ: Յատկապէս ցեղասպանի համար նպատակը արդարացնում է միջոցը: Միջոցը ցեղասպանութիւնն էր, նպատակն է՝ ընդունելի եւ անընդունելի բոլոր եղանակներով ջնջել Հայոց բնիկութեան աղաղակող փաստերը: Մինչդեռ հայերի բնիկութիւնը բազմիցս հաստատել եւ շարունակում են վերահաստատել մարդաբանական, լեզուաբանական, ծնաբանական (genetic) հետազոտութիւնները: Հայոց չընդհատուող ցեղասպանութիւնից յետոյ, երբ Հայկական բարձրաւանդակի տերերն արդէն գրեթէ բնաջնջուած էին, ժամանակն էր դուրս մղելու աշխարհագրական վաղեմի եզրոյթը, որն ամէն անգամ հնչելիս վիրաւորում էր ցեղասպանի ականջը, եւ որով աշխարհը հազարամեակներով ճանաչում էր տարածքը՝ բնիկ ազգի բնական լեռնային ամբողջ Հայկական բարձրաւանդակը, որ համընկնում է Հայոց սահմաններին: Հայոց քաղաքակրթութիւնը, Հայոց պատմութիւնը, Հայոց լեզուն, Հայոց մշակոյթը, որպէս ինքնակայ մի ամբողջութիւն՝ գոյացել ու եփուել է բարձրադիր այն կաթսայում, որ իրաւամբ ստացել է Հայկական բարձրաւանդակ անունը: Եւ առաջադէմ քաղաքակիրթ աշխարհը պատմութիւնը նենգափոխողներին մեծապէս աջակցեց՝ գրկաբաց ընդունելով նոր եզրոյթը, այն որպէս նորոյթ կիրառելով հնարաւոր բոլոր ճանաչողական, գիտահանրամատչելի, գիտական հրապարակումներում՝ այդպիսով խախտելով պատմական ժամանակագրութիւնը, կեղծ հնութիւն վերագրելով նրան, նրանով պատմագրութեան մեջ ներառելով կեղծ դրոյթներ, ընդհուպ մինչեւ «Արեւելեան Անատոլիա», «Թուրքիա» անունները թուրքական ներկայութիւնից հարիւրաւոր, հազարաւոր տարիներ առաջ այդ տարածքում տեղի ունեցած իրադարձութիւնների մասին պատմելիս գործածելը: Չպէտք է զարմանալ նոյն իսկ այն դէպքում, երբ գիտահանրամատչելի կամ գիտական որ եւ յաղորածում, շարժանկարում բացայայտէք, որ, արիւնակ, Աղեքսանդր Մակեդոնացին անցել է Թուրքիայով, կամ որ Թուրքիայում է կառուցուել հնագոյն պաշտամունքային տաճարը՝ Պորտասարը (ի հարկէ՝ իրենց մոզոնած անուամբ): Հնագիտական պեղումներով յայտնաբերած ամէն ինչ գիտութեամբ թե անգիտութեամբ վերագրում էք Անտիկ Թուրքիային: Նրանց յոյսն այն է, որ ժամանակը լեզուական մակարդակում հետ զհետ կը ջնջի իրականութեան ճշմարիտ պատկերը, եւ կեղծիքը վերջնականապէս կը յաղթանակի (թե եւ դա նրանց այնքան էլ չի յուզում):

Ուրեմն, «ինչպէ՞ս» հարցին պատասխան փնտրելու կարիք չկայ. դա անում են ձեր միջոցով: Կամովին եւ մեծագոյն սիրով նետուում էք նրանց կեղծիքները որդեգրելու եւ տարածելու: Եթե փոխադարձ շահերով միմեանց գրկում ապրելը տաք ու ապահով է, ապա երանի՜ ճակատագրական վճռական (critical) պահի ձեր հաշուարկում սխալուած չլինէք:

Ուրեմն, համաձայնէք, ցեղասպանութեան եւ տեղանուանափոխութեան միջեւ կապը բացայայտ, ապացուցելու կարիք չունեցող իրողութիւն է: Համոզուելու համար վերստին համեմատէք հին ու նոր քարտեզներ:

Եւ այսար էլ Արցախի տեղանունների փոփոխութիւնը հարիւրամեակ ի վեր սկսուած եւ առ այսար շարունակուող ցեղասպանութեան աղաղակող արձանագրութիւնն է:

Մենք դեռ յոյս ունենք, որ փոխշահաւետ գործարքներ կնքելուց յետոյ, երբ գլուխը բարձին էք դնում, ձեր խորքում խղճի փոքրիկ մի բիւրեղ այնու ամենայնիւ արթնանում է: Պիտի որ արթնանայ նա՛՝ եւ սերունդների առջեւ պատասխանատուութեան նշոյղ, որ տարբեր է այն պատասխանատուութիւնից, որով առաջնորդուում էք այսար. չէ՞ որ մի ար պատասխանի սպասող նրանց հայեացքի առջեւ կանգնելու էք ամառաշաքար ու գլխահակ, թե եւ նրանց եւ նրանց սերունդներին եւս կարծես ապահովել էք ամէն ինչով: Ձեր լուռ համաձայնութեամբ եւ արտանած անպատժելիութեամբ Հայոց (մարդկութեան) թշնամիները անհետ կործանեցին ու հիմնայատակ աւերեցին Նախիջեւանի հարիւրաւոր վանքերն ու եկեղեցիները, աղացին ու Երասխ գետը լցրին շուրջ տասը հազար հոյակերտ խաչքարերը, որոնք մարդկութեան մշակութային ժառանգութեան անքակտելի մասն էին, լաւագոյն մասը,



արդէն ի սպառ բնաջնջուած մասը: Եթէ Ադրբեջանն իրենն է համարում Նախիջեւանը, ուրեմն ինչո՞ւ է աւերում ու հողին հաւասարեցնում իր իսկ ստեղծածը: Սակայն ի՞նչ սպասես նրանից, որ իրենք համարած Արցախի բնակչութեանը ռազմական յանցագործութիւնների թիրախ դարձրեց ու ենթարկեց իրական ցեղասպանութեան: Ափսոս, որ մեր արեւրում իրաւունքն ու բարոյականութիւնն արժեզրկուել են այնքան, որ երկրագնդի անհամար իրաւաբանների ու քաղաքագետների մէջ երկու կանանց վէճը լուծած Մոդովոն գտնել հնարաւոր չէ... Եւ այսար Ադրբեջանը պահանջում է բզկտուած մեր երկրի միջով ճանապարհ տրամադրել մեր երկրի՝ իլաժ մի մասից՝ Արցախից, իլաժ ու աւերած մեւս մասը՝ Նախիջեւան, հասնելու համար:

Ձեր լուռ համաձայնութեամբ՝ մարդկութեան մի ձեւը մոխրացաւ, ցաք ու ցրիւ ոստեր միայն մազապուրծ փրկուեցին, բայց նրանց սերունդները ձեր իմացութեամբ եւ նոյն լուռ համաձայնութեամբ յաւիտեան զրկուեցին իրենց մեծագոյն ժառանգութիւնից՝ հայրենի հողից, ապա եւ՝ նիւթի մէջ մարմնաւորած հոգեւոր այն աշխարհից, որ որպէս յիշողութիւն եւ ուղեցոյց նրանց թողել էին իրենց նախնիները...

Ուրեմն, մասնագիտական նախանձախնդրութեան հարց է՝ պարզել՝ երբ, ինչու եւ ինչպէս են բնիկ տեղանունները փոխարինուում նորերով, եւ սկզբունքային լինել միշտ եւ մինչեւ վերջ: Միայն ազնիւ մտաւորականներն են բաւականաչափ ազատ՝ ասելու. «Հայերի իրաւունքներն ունեցողն աշխարհում ուրիշ բանի կարիք չունի՝ բացի ճշմարտութիւնից» (Անտուան Մէէ):

Եւ միայն ազնիւ քաղաքական գործիչներն են ազատ այնքան, որ կարողանան պաշտպանել ճշմարտութիւնը:

## ՏԵՄԱԿԷՏ

### Ի՞ՆՉ ՏՈՒԱԾ Է ՀԱՅՈՒՆ ԼԻԲԱՆԱՆԸ

Լիւսի Տեքմէճեան, Երեւան, 29 Փետրուար 2024, ԳԵՂԱՐԴ



Աշխարհի վրայ գոյութիւն ունեցող մօտաւորապէս տասը միլիոն հայերուն գրեթէ երկու երրորդը ծնունդ առած է ու կ'ապրի Հայրենիքէն դուրս: Դարեր առաջ եղած են հայեր, որոնք, պետականութեան բացակայութեան պայմաններու տակ եւ հաւանաբար առեւտրական զբաղմունքներու պատճառներով, բնակչութիւն հաստատած են այլ երկիրներու մէջ եւ հիմնած գաղութներ, բայց հայ ժողովուրդի աշխարհով մէկ տարածման եւ Սփիւռքի

ձեւաւորման հանգամանքը հիմնականօրէն պայմանաւորուած է տարագրութեան եւ Ցեղասպանութեան փաստով: Գլխաւորաբար Սուրիան, բայց եւ Լիբանանը եղած են կոտորածներէն մազապուրծ՝ մարմնապէս ու հոգեպէս հիւժած հազարաւոր գաղթականներու եւ սովահար որբերու հիմնական ապաստարաններն ու հիւրընկալ օճախները: Ինչ փոյթ որ հետագային սփիւռքահայութեան կեդրոնը դարձաւ Ամերիկայի Միացեալ Նահանգները:



Ծնած եմ «Արեւելքի Զուիցերիա» մակդիրի երբեմնի տիտղոսակիր Լիբանանի մէջ, որ կիսելով հանդերձ արաբական աշխարհի առանձնայատկութիւններէն շատերը, ունի յատկանիշեր, որոնք զայն կը տարբերեն իր արաբ դրացիներէն: Լիբանան բազմամշակոյթ երկիր է եւ մանաւանդ իր փառքի տարիներուն տուն տուած է բազմազգի այլախոհներու, որոնք վայելած են Երրորդ աշխարհի այս արաբական երկիրը իր քաղաքակրթութեամբ, մշակոյթով, մտածելակերպով ու վարուելակերպով: Եւ լիբանանահայերը, 1920-ական թուականներէն սկսեալ ըլլալով այդ երկրին մէկ մասնիկը, ինքնաբերաբար կրած են այդ դրական յատկանիշերը: Բաց-մտածողութեամբ հասարակութիւնն է որ լիբանանցին դարձուցած է, իր ազգակից ժողովուրդներուն իսկ վկայութեամբ, արաբին ամենագեղեցիկ դէմքը: Ջերմ, հիւրասէր, զգայուն, յարմարուող, կեանքը սիրող, լայնամիտ, ճաշակաւոր եւ աշխատասէր: Գուցէ այդ բոլորին մէջ պէտք է փնտռել ֆրանսական քաղաքակրթութեան հետքերը:

\*\*\*\*\*

Կար ժամանակ երբ կը մտածէի, թէ ճիշդ է որ հայ ժողովուրդը միշտ երախտապարտ պիտի մնայ Լիբանանին ու երբեք չի կրնար ուրանալ գաղթականութենէն հոն հասած տարաբախտ հայուն հիւրընկալումը, սակայն հետագային հայերն այլ իրենց կարգին, այնքան շատ բան տուած են Լիբանանին: Տուած են հայկական աւանդութիւններէն, մշակոյթէն, արուեստներէն ու արհեստներէն, սատարած են անոր բարգաւաճման ու շատ ոլորտներու մէջ բարձր պահած են անոր անունը: Այդուամենայնիւ Հայաստան տեղափոխուելէս ետք, Լիբանանը սկսած եմ դիտել այլ ակնոցով:

Եթէ այսօր, Լիբանանէն հայրենադարձներու մօտ ինչ-որ դրական՝ տարբերուող կէտեր կ'ընդգծուին, այդ կը վերագրեմ լիբանանեան կենցաղին, մշակոյթին, որով մենք ինքնաբերաբար սնուած ենք: Հոն մարդիկ տարբեր խորապատկեր ունին, իշխող է Միջերկրական ծովու ափի ժողովուրդներուն բնորոշ պահուածքը: Մեր խառնուածքը՝ ջերմութիւնը, մարդամօտութիւնը, ազնուութիւնը, լայնախոհութիւնը մենք կը պարտինք լիբանանցիի ընկերային, մարդասէր եւ ազատախոհ յատկութիւններուն, ուրիշներուն հանդէպ բացուած ապրելակերպին:

Բայց, եթէ նոյնիսկ պահ մը մոռնանք այս բոլորը կամ անտեսենք վերոնշեալներուն ազդեցութիւնը մեր սփիւռքահայու նկարագրին վրայ, եթէ մտածենք որ Լիբանանը մեզի ոչ մէկ իւրայատուկ բան տուած է, ՉԵՆՔ ԿՐՆԱՐ եւ ԻՐԱԻՈՒՆՔ ՉՈՒՆԻՆՔ դրժելու, որ ան մեզի ընձեռած է որպէս լիարժէք հայ ապրելու իրաւունքը եւ հնարաւորութիւնը: Եւ այս չգնահատելը երախտամոռութիւն եւ ապերախտութիւն պիտի ըլլար:

Լիբանանահայ գաղութը մեզի համար եղած է փոքր Հայաստան մը. անկաշկանդ հայերէն խօսիլ, հայկական ձեռնարկներ՝ բացառապէս հայերէն ծանուցումներով եւ բովանդակութեամբ, հայոց լեզուի ու պատմութեան անարգել դասաւանդում, հայկական սօսներու նշում... մէկ խօսքով՝ հայկական շունչով թրծուելու եւ հայօրէն ապրելու բացառիկ միջավայր:



Այսօր երբ կը տեսնեմ թէ ինչպէս այլ, ի մասնաւորի արեւմտեան գաղութներու մէջ, հայկական հաստատութիւններու կամ կազմակերպութիւններու պատասխանատուներ կը նախընտրեն կամ ստիպուած են իրենց ոչ-հայախօս լսարանին համար հաղորդակցիլ օտար՝ ոչ-հայերէն լեզուով, ձեռնարկները յաճախ կատարելով ոչ թէ երկլեզու, այլ միայն օտար լեզուով, այդ ժամանակ փառք կու տամ, որ ծնունդ առած ու ապրած եմ երկրի մը մէջ, որ ամէն դիրտութիւն տուած է, որպէսզի հայկական ամուր հիմքեր ունենամ: Ամէն դիրտութիւն՝ որպէսզի ցանուած ազգային հունտերը ճիշդ ձեւով աճին: Հետագային անկէ շեղիլը ու ծոխիլը այլեւս անհատական ընտրութիւն կ'ըլլայ ու մեղադրելի կը դառնայ ինքնին անհատը:

Լիբանանին շնորհած՝ որպէս հայ կազմաւորուելու այդ ազատութեան շնորհիւ է որ այսօր երբ որպէս հայրենադարձ ինծի հարց կու տան՝ «Իսկ դուք հայերէն հասկանո՞ւմ էք, կարդո՞ւմ ու խօսո՞ւմ էք», ես հպարտութեամբ դրական պատասխան կու տամ, գուցէ նաեւ շատերու զարմանք պատճառելով, որ հայերը Լիբանանի մէջ ընկերային եւ քաղաքական ասպարէզներուն մէջ պատշաճօրէն ներկայացուած են, բազմաթիւ հայկական վարժարաններով ու եկեղեցիներով, հայկական անուանումով փողոցներով, օրաթերթերով, ձայնասփիւռի կայաններով եւ ակումբներով: Բացառիկ հայկական գաղութ, որ արժանի է ամէն գնահատանքի: Մաղթենք, որ ան ԵՐԲԵՔ աւելի չնահանջէ եւ այլ գաղութներու ճակատագրին չարժանանայ:

Ահա թէ ինչո՞ւ Լիբանանի հայկական գաղութը անփոխարինելի է:

Բիւր շնորհակալութիւն Մայրիներու յաւերժական երկիր Լիբանանին, որ ոչ մէկ կերպ խոչընդոտեց մեր լիարժէք հայ կազմաւորման: Եւ ահաւասիկ այսօր որպէս այդպիսին՝ հայկական ամուր արմատներով հայրենադարձ եղած եմ, հաւատալով որ բոլոր սփիւռքահայերուն վերջնագոյն նպատակը պէտք է ըլլայ վերադառնալ՝ ապրիլ եւ արարել Հայաստանի Հանրապետութեան մէջ:

Լիւսի Տօրոսեան

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱՆՊԱՏԱԿ ԸԼԼԱԼԸ ԲԱԻԱՐԱՐ ՉԷ՝

### ԱԻՕ ՊՕՂՈՍԵԱՆ



Ո՞վ պահ մը չի փշաքաղիր, երբ լսէ ազգային քայլերգը, կամ երբ դիտէ ազգային բանակին տողանցքը, երբ հազարաւորներ կը ծափահարեն կամ կը գոչեն ուռա՛: Այս զգացումները, հաւանաբար, մարդոց հոգիին մէջ անթելուած կայծեր են՝ որոշ փորձառութիւններու հետ կապ ունեցող, մայրենի լեզուի իմացութեան, պատմութեան դասագիրքերու, վէպերու եւ, անվիճելիօրէն, ազգային պատկանելութեան: Սակայն, այդ զգացումներուն ունեցած ազդեցութիւնը հայրենիքի բարօրութեան վրայ քննարկելի է եւ բազմաթիւ բանավեճերու նիւթ եղած թերեւս



բոլոր դարերուն: Արդեօք ազգային պատկանելութեան զգացումին ինքնանպատակ ըլլալը բաւարար է «հայրենասիրութիւն» հասկացութեան սահմանման համար:

Բնականաբար, նախքան այդ հարցը քննարկելը, թերեւս պէտք է ազգին մաս կազմող զանգուածները բաժնել հայրենիքէն դուրս ապրողներու եւ հայրենի ժողովուրդի միջեւ:

Օտար ափերու վրայ ապրելով, կամայ թէ ակամայ մարդ ստիպուած պիտի ըլլայ իրեն ապաստան տուող երկրին լեզուն սորվելու, գործ ապահովելու, հաղորդակցելու եւ կեանքը ապրելու համար: Կենցաղային այս հարկադրանքը հետզհետէ պիտի ազդէ նաեւ անոր լեզուամտածողութեան, մանաւանդ՝ երկրորդ կամ երրորդ սերունդին վրայ: Այս ուժացման եւ օտարացման գործընթացը, միայն աննշան չափով պիտի տարբերի երկիրէ երկիր: Ապաստան տուող երկիրներու կրօնական տարբերութիւնները եւ զարգացման մակարդակը որոշ դեր կը խաղայ այդ ուժացման ուշացման վրայ:

Հայութեան մասին խօսելով, օրինակ, միջինարեւելեան երկիրները առաւելաբար իսլամութեան հետեւորդներ ըլլալով՝ մեր համայնքները աշխարհագրականօրէն խմբուած են, ուժացումը քիչ մը աւելի ուշ տեղի կունենայ, բաղդատած արեւմտեան կիսագունդի երկիրներուն հետ, որոնք մեզի պէս քրիստոնէութեան հետեւորդներ են:

Այստեղ է նաեւ հրեայ ժողովուրդին հիմնական տարբերութիւնը եւ առաւելութիւնը բոլոր իրենց բնօրրաններէն դուրս ապրող ժողովուրդներէն: Հրեաները հազարաւոր տարիներ ապրելով հանդերձ իրենց չպատկանող երկիրներու մէջ, ուրիշ ժողովուրդներու հետ համեմատած՝ աւելի շատ դիմացած են իբրեւ հաւաքականութիւն, հակառակ նոյնիսկ իրենց լեզուն կորսնցնելուն, որովհետեւ անոնք իրենց կրօնքով կը տարբերին զիրենք հիւրընկալող ժողովուրդներէն:

Հայութեան երբեմնի ստուար համայնքները ամբողջ կեդրոնական եւ արեւելեան Եւրոպայի՝ Լեհաստանի, Ռումանիոյ, Հունգարիոյ եւ Պոլկարիոյ տարածքին, այսօր բոլորովին ձուլուած են, նաեւ՝ Հնդկաստանի, Բնտոնեզիոյ եւ Հոնկ Քոնկի երբեմնի մեծ եւ փոքր գաղութները: Այդ գաղութներու հայութիւնը անկասկած հայրենասէրներ էին եւ կան անոր փաստերը: Գիտենք, որ Հնդկաստանի հայութիւնը 1770ականներուն հիմնած էր Մատրասի խումբը, որուն անդամներն էին՝ Յովսէփ Էմին, Մովսէս Բաղրամեան, Շահամիր Բաղրամեան, Յարութիւն Շմաւոնեան եւ ուրիշներ: Մատրասի ազգային ժողովը 1803ին, Հայաստանի ազատագրութեան հարցին համար դիմած էր Ռուսիոյ օգնութեան: Իսկ արեւմտեան Եւրոպայի մէջ հաստատուած հայ վաճառականներ երբեմն հայ ուսանողներու իրենց նիւթական օժանդակութիւնը տուած էին:



Այսօր, հայկական ստուար այդ հին գաղութներէն ոչինչ մնացած է, Լեհաստանի մեծ գաղութներէն ոչ մէկ հետք մնացած է:

Միջին Արեւելքի հոծ գաղութներուն մեր աչքերուն առջեւ խամրիլը տեսանք: Ճիշդ է որ հիմնականին մէջ անոնք, հոն տիրող քաղաքական ճգնաժամերուն պատճառած արտագաղթներուն պատճառով նօսրացան, սակայն, նաեւ՝ խառն ամուսնութիւններու, ուծացումի եւ այլասերման: Հոս կ'արժէ յիշել Նիկոլ Աղբալեանի հետ կապ ունեցող դրուագ մը: 1940ականներուն, լիբանանահայութեան կուռ ազգային կեանքի ժամանակաշրջանին, երբ գաղութը ուներ իր դպրոցները, մշակութային հաստատութիւնները, եկեղեցիները, ուր հայերէնը կը դասաւանդուէր ազատօրէն բոլոր հայկական դպրոցներուն մէջ, մինչ Սովետական Հայաստանի մէջ կային հայ մտաւորականութեան դէմ բռնամիջոցներ, աքսորներ եւ հալածանքներ, իսկ երկրին մէջ համատարած ռուսացման քաղաքականութիւն կը տարուէր, խումբ մը հայ երիտասարդներ Աղբալեանին կը յայտնեն իրենց մտահոգութիւնը Հայաստանի մէջ այդ ռուսացման վտանգին գծով: Աղբալեան կը հանդարտեցնէ զիրենք՝ ըսելով. «Մի մտահոգուիք, աշխարհի վրայ նոյնիսկ եթէ մէկ հայ մնայ, որ հայերէն պիտի խօսի, այդ մէկը Հայաստանի մէջ պիտի ըլլայ եւ ոչ՝ Սփիւռքի»:

Այսօր, Հայաստանի հազիւ երեք միլիոն հայութեան դիմաց, Սփիւռքի մէջ կապրին 7 միլիոն հայեր, որոնք անպայմանօրէն պիտի ձուլուին մօտիկ ապագային: Ռուսիոյ տարածքին կան առաւել քան 2 միլիոն հայեր, որոնք նոյնիսկ մէկ հայկական ամէնօրեայ դպրոց չունին: Մեզի դրացի Թիֆլիսի երբեմնի կարեւոր համայնքին մէջ, ուր կեդրոնացած էին մեր ազգային հաստատութիւնները, դպրոցները եւ մտաւորականութիւնը, այսօր նոյնիսկ հայկական թաղամասերուն մէջ քալելով կարելի չէ հայերէն լսել: Վստահաբար կա՛ն, սակայն կը զգուշանան խօսելէ կամ արդէն վրացախօս դարձած են:

Սփիւռքի հայութեան մօտ անվիճելիօրէն կան հայրենասիրական զգացումներ, թէ որքան եւ ինչ ձեւի տակ՝ գիտենք եւ գրեթէ վստահ ենք, որ բոլորին մէջ Հայաստանի մասին տեղեկութիւն մը, առնուազն հետաքրքրութիւն մը պիտի արթնցնէ, ոմանց մօտ փշաքաղութիւն մը, ուրիշներու մօտ բերկրանք, որոշ խումբեր ներգրաւուած կրնան ըլլալ զանազան միութիւններու եւ կուսակցական կազմակերպութիւններու մէջ, շատեր երբ անհրաժեշտ է փոքր լումայ մըն ալ կը նուիրեն յօգուտ հայրենիքին, ոմանք կրնան աւելի մեծ գումարներով մասնակից ըլլալ ազգօգուտ ծրագիրի մը, սակայն ասոնք մասնակի երեւոյթներ են եւ ժամանակաւոր, որովհետեւ մէկ կամ երկու սերունդ ետք, կեանքի պայմաններու բերումով, անոնց մեծ մասը պիտի ձուլուի կամ նուազ ներգործօն ըլլալ ազգային ծրագիրներու մէջ:



Ի տարբերութիւն Սփիւռքի հայութեան, հայրենիքի մէջ ապրող ժողովուրդը, հայապահպանման յաւելեալ ճիգ թափելու պարտաւորութիւնը չունի, մեղմօրէն ըսած, ոչ ալ՝ հայօրէն գործելու անհրաժեշտութեան տակ ըլլալու: Ան պարզապէս իբրեւ քաղաքացի կ'ապրի եւ կը գործէ, ունենալով օրէնքով սահմանուած պետութեան հանդէպ իր պարտաւորութիւնները եւ փոխադարձաբար անկէ ունի իր ակնկալիքները, սակայն պատերազմի պարագային, ան է որ երկիրի ապահովութեան ամբողջ բեռը իր ուսերուն կը վերցնէ՝ իր սեփական արեան գնով, որուն դիմաց սփիւռքահայութեան նիւթական մասնակցութիւնը անհամեմատ չնչին կը դառնայ:

Հայութեան բազմաթիւ մարտահրաւերները արդիւնաւետօրէն դիմակայելու համար, անհրաժեշտ է Հայաստանի եւ Սփիւռքի հնարաւորութիւնները առաւելագոյնը օգտագործել, որ դրական արդիւնք պիտի ունենայ թէ՛ Հայաստանի հզօրացման, թէ՛ Սփիւռքի դիմադրողականութեան մէջ:

Վերջապէս, Հայաստանէն արտագաղթի դադրեցումը եւ նոյնիսկ հայրենադարձութիւնը պայմանաւորուած են հզօր եւ զարգացած տնտեսութեամբ հայրենիքով:

22/2/2024

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՁԵՐՄ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Յարութիւն Իսկահատեան – Պէրուք



Հայաստանի Հանրապետութեան եւ Չինաստանի Ժողովրդային Հանրապետութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւնները հաստատուած են 1991-ի Հայաստանի անկախութենէն տարի մը ետք: Այդ յարաբերութիւնները դրական եղած են եւ կը շարունակեն մնալ այդպէս երկու երկիրներուն միջեւ ու ներկայիս դարձած են բարեկամական: Չինաստան Երեւանի մէջ իր դեսպանատունը բացած է 1992-ին իսկ Հայաստան Փեքինի մէջ 1996-ին:

Պատմականօրէն հայոց ներկայութիւնը Չինաստանի մէջ կը սկսի Ք. Ե. 2-րդ դարէն, ուր հայերը մետաքս եւ այլ ապրանքներ վաճառող առեւտրականներ էին եւ կը բնակէին Չինաստանի մեծ քաղաքներուն մէջ: Հին դարերու եւ միջնադարեան մետաքսի ճանապարհները կ'անցնէին Հայաստանի լեռներէն: Հայաստանի զանազան ժամանակաշրջաններու մայրաքաղաքները՝ ինչպէս Արտաշատ, Կարս եւ Վան այդ առեւտուրին կը մասնակցէին աշխոյժ կերպով:

Հայ-չինական յարաբերութիւններու մասին առաջին տեղեկութիւնները հայ պատմագրութեան մէջ կը գտնենք պատմահայր Մովսէս Խորենացիի մօտ, ըստ որուն հայ նախարարական տոհմերէն Մամիկոնեաններն ու Օրփելեանները ունէին չինական ծագում:



Մեփեռն, Փաւստոս Բիւզանդ ու Անանիա Շիրակացի պատմիչները նաեւ գրած են Չինաստանի մասին:

Հայ առեւտրականները Չինաստանէն կը բերէին մետաքս եւ ճենապակեայ առարկաներ ու Չինաստան կը տանէին գորգեր եւ որդան կարմիրէն պատրաստուած ներկեր: (համացանցային կայքէջ.- <https://hy.wikipedia.org/wiki/%D5%89%>):

Ներկայիս թե՛ Հայաստանը եւ թե՛ Չինաստանը մեծ կարեւորութիւն կ'ընծայեն հին քաղաքակրթութիւն եւ մշակոյթ ունեցող իրենց երկիրներու յարաբերութեանց: Հայաստանն ու Չինաստանը ունին նոյն տեսլականը միջազգային զարգացումներու նկատմամբ եւ հետամուտ են խաղաղութեան հաստատման ամբողջ աշխարհի վրայ: Ասոր կողքին ներկայիս Հայաստանի եւ Չինաստանի փոխյարաբերութիւնները կեդրոնացած են առեւտուրի, կրթութեան, ռազմական հարցերու եւ հանքարդիւնաբերութեան մարզերու վրայ:

Հայաստանի եւ Չինաստանի համար յոյժ կարեւոր է իրենց երկիրներուն միջազգային յարաբերութիւնները զարգացնելը: Այս ուղղութեամբ Հայաստանը Չինաստանի հետ գործակցաբար արձագանգեց անոր նախագծած «Մէկ գօտի, մէկ ճանապարհ» նախաձեռնած ծրագրին, որ կը նպատակադրէ աշխարհի բոլոր երկիրներու հետ յարաբերութիւնները խորացնել ի խնդիր խաղաղութեան: Վերջին քսան տարիներու ընթացքին Հայաստանի եւ Չինաստանի փոխյարաբերութիւնները աշխուժացած են բոլոր ոլորտներուն մէջ:

Հայաստանի եւ Չինաստանի միջեւ պետական մակարդակի այցելութիւններէն կարեւոր էր Հայաստանի նախկին նախագահ Սերժ Սարգսեանի այցելութիւնը Փեքին Սեպտեմբեր 2013-ին, ուր Չինաստանի նախագահ Սի Ճինփինի հետ տեսակցեցաւ եւ ստորագրեցին համաձայնութիւններու շարք մը, որոնք կը միտին ընդլայնել երկու երկիրներու միջեւ քաղաքական, տնտեսական, մարդասիրական, մշակութային, կրթական ու այլ ոլորտներու կապերն ու համագործակցութիւնը: Այդ համաձայնութիւնները կը ձգտին նաեւ հետազօտական, լրատուական, ընկերային ու արուեստի ոլորտներու մէջ գործակցութեան աշխուժացման:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը վերջերս երկու անգամ շեշտեց Չինաստանի հետ յարաբերութիւնները ա՛լ աւելի զարգացնելու անհրաժեշտութիւնը: Վարչապետը իր երկրորդ ընտրութենէն ամիս մը ետք հանդիպեցաւ Երեւանի մէջ Չինաստանի դեսպան Թիէն Իրլունի հետ: Երկու կողմերը ընդգծեցին յարաբերութիւններու ալ աւելի զարգացման կարիքը, առաջնակարգ սեպելով քաղաքական եւ տնտեսական ոլորտները: 14 Մայիս 2019-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ տիկինը Աննա Յակոբեան այցելեցին Փեքին: Գործի խտացուած ժողովներէ ետք երկու կողմերը համաձայնագիրեր ստորագրեցին, ամրապնդելով Հայաստանի եւ Չինաստանի փոխյարաբերութիւնները: Նիկոլ Փաշինեան պատիւով ընդունուեցաւ Չինաստանի Ներկայացուցիչներու Ժողովրդային Տան մէջ: Համաձայնագիրերը ընդգրկեցին ռազմական, տնտեսական, կրթական եւ հանքագործական ոլորտները:

Գիտական ասպարէզին մէջ Հայաստանն ու Չինաստանն կը համագործակցին երկու տասնամեակներէ ի վեր: Այս ուղղութեամբ 2017-ին Փեքինի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան հիմնարկի ու Չինաստանի քաղաքական ու ընկերային Ակադեմիայի միջեւ գիտաժողով մը, որու ընթացքին հայ գիտնականները ծանօթացան «Մէկ գօտի, մէկ ճանապարհ» չինական նախաձեռնութեան ու անոր շուրջ հայ եւ չին գիտնականները կարծիքներ փոխանակեցին: Այդ նախաձեռնութեան նպատակն էր բացուիլ համայն աշխարհի երկիրներուն հետ ի խնդիր խաղաղութեան ու բարօրութեան: Իսկ վերջերս Երեւանի մէջ տեղի ունեցած Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ակադեմիայի հիմնադրութեան 75-ամեակի



նուիրուած միջոցառումներուն՝ ներկայ գտնուեցաւ Չինաստանի Ազգային Ակադեմիայի նախագահ Պայ Չուն Լին:

Կրթական ոլորտի յարաբերութիւնները երկու երկիրներուն միջեւ նորերս թափ առին եւ Երեւանի մէջ բացուեցաւ հայ-չինական դպրոցը, որուն ծրագիրը կը յենի Հայաստանի Հանրապետութեան Կրթական Նախարարութեան որոշած ծրագրային դրութեան: Դպրոցին մէջ կը դասաւանդուի չինարէնը իբրեւ մասնագիտացուած օտար լեզու: Այս դպրոցը Երեւանի ամենէն մեծ օտար դպրոցն է ներկայիս: Դպրոցին աւարտականները կրնան լայն հնարաւորութիւն ունենալ իրենց համալսարանական կրթութիւնը ստանալու Չինաստանի մէջ կամ այլ ոլորտներու մէջ զարգանալու եւ գործելու: Միւս կողմէ 2014-ին Փեքինի մէջ հաստատուած օտար լեզուներու համալսարանին մէջ կը դասաւանդուի հայերէն, որ ուսանողներուն հնարաւորութիւն կու տայ հետագային հետեւելու Հայաստանի Պետական Համալսարանի կամ այլ կրթական հաստատութիւններու հայագիտական դասընթացքներուն:

Չինաստանի մէջ այժմ կ'ապրին 500-1000 հայեր Կուանկժու, Նանճինկ, Շանկիայ եւ Հոնկոնկ քաղաքներուն մէջ: Անոնց մեծ մասը առեւտրականներ, փաստաբաններ եւ տնտեսագէտներ են: Ամէն տարի Ապրիլ 24-ին հայերը իրար քով կու գան Նանճինկի Հայոց Ցեղասպանութեան թանգարանը, կը նշեն Հայոց Ցեղասպանութեան յիշատակը եւ ծաղկեփունջեր կը զետեղեն հայ նահատակներու նուիրուած յուշահամալիրին առջեւ:

Հայաստանի պաշտպանութեան նախկին նախարար Վիգէն Սարգսեան Փեքին այցելութեան ընթացքին ստորագրեց Չինաստանի կողմէ Հայաստանի հինգ միլիոն եռուստուան ռազմական օժանդակութիւն տրամադրելու համաձայնագիր: Նախարար Սարգսեան Փեքինի մէջ նաեւ այցելեց զէնք արտադրող «Փոլի Կրուպ» եւ «Նորինկո» ընկերութիւններու տնօրէններուն:

Հայաստանի եւ Չինաստանի ռազմական յարաբերութիւններուն մասին լաւագոյնս կը տեղեկացնէ Երեւանի մէջ Չինաստանի դեսպանատան ռազմական կցորդը՝ երէց գնդապետ Անն Քիանկը իր զեկուցումով որ տուած է 17 Օգոստոս 2023-ին: Քիանկ կ'ըսէ. «Իբրեւ ռազմական կցորդ, նախապատուութիւնը կուտամ Չինաստանի եւ Հայաստանի միջեւ սերտ յարաբերութեանց, մանաւանդ ռազմական գետնի վրայ: Երկու երկիրները պատմութեան մէջ դիմագրաւած են դժուարութիւններ եւ երկուքն ալ յաղթահարած են զանոնք: Մենք սերտ յարաբերութիւններ ունինք Հայաստանի Հանրապետութեան հետ զանազան ոլորտներու մէջ եւ մանաւանդ ռազմական: Չինական զինուորական պատուիրակութիւնը որ Երեւան այցելեց վերջերս, հանդիպումներու արդիւնքէն աւելի քան զոհ մնացած է եւ մենք կը տեսնենք բեղուն հորիզոն մը ռազմական համագործակցութեան համար» (Համացանցային կայքէջ. - <https://armenpress.am/eng/news/1117594/>):

Հայաստանի եւ Չինաստանի միջեւ 1991-էն ի վեր գոյութիւն ունեցող սերտ յարաբերութեանց ընթացքին ռազմական առեւտուրի տարողութիւնը 160 միլիոն տոլարէն 2015-ին հասաւ 480 միլիոն տոլարի: Երկու երկիրներու պաշտօնական միացեալ յայտարարութեանց մէջ կը յիշուի ռազմական պատուիրակութիւններու փոխադարձ այցելութիւնները եւ Չինաստանի կողմէ հայկական բանակի գումարտակներու զինեալ փորձերն ու վարժութիւնները դիտարկելը:

Չինաստան 2015-ին մարգած ու զինած է հայկական բանակի սպաներ ու զինուորներ եւ Հայաստանի բանակին հայթայթած է բազմարձակ դրութեամբ հրթիռային սարքեր: Հայկական բանակը Չինաստանէն գնած է յառաջացած հրթիռներ, որոնց հասողութիւնը մինչեւ 100 քիլոմէթր է:

Փոխադարձաբար, վերոյիշեալ ռազմական օգնութիւններուն դիմաց Հայաստան վաւերացուցած է Չինական ինքնիշխանութիւնը Թայուանի վրայ: 2015-ին պաշտօնական Երեւանը յայտարարած է թէ պիտի հակառակի Չինաստանէն Թայուանի անջատման կամ անկախութեան, խուսափելով որեւէ պաշտօնական կապ հաստատել Թայուանի հետ:



Հայաստանի Հանրապետութիւնը նեցուկ կը կանգնի Չինաստանի Ժողովրդային Հանրապետութեան հողերու ամբողջութեան (Համացանցային Կայքէջ.- <https://www.google.com/search...>):

Թէեւ Չինաստանը Արցախի հարցով ինքնորոշման իրաւունքի կողմնակից էր, սակայն Թայուանի պարագան նկատի ունենալով հողային ամբողջականութեան սկզբունքին աւելի եւս շեշտուածութիւնը իր առաջնահերթութիւնը ըլլալով, այլ պետութիւններու նման ի վերջոյ ազդպէյճանական այդ շեշտադրման փաստացի կողմ եղաւ, 2020-ի Արցախեան 44-օրեայ պատերազմին հայոց համար ժխտական ելքէն յետոյ:

Ներկայիս Հայաստան կը ջանայ Չինաստանի հետ յարաբերութիւնները ջերմ պահել, մանաւանդ ի նկատի ունենալով Չինաստանի համաշխարհայնօրէն օրէ օր մեծցող դերակատարութիւնը համաշխարհային գետնի վրայ:

Ադրբայ՝ ՊԱՅՔԱԸ

## ԱՅՈ՞ՒԹԷ՞ Ո՛Չ

### Յակոբ Միքայէեան

29/02/2024



Մարդիկ իրենց անցեալի արարքներուն համար պատասխանատու են. կարծեմ՝ այո՛, թէեւ անձէ անձ կը տարբերի: Առաքինի մարդիկ, վստահ եմ, ամէն ինչ կ'ընեն, որ իրենց անցեալը մաքրեն, իրենց անունին վրայ բիծ չմնայ, մինչ կան մարդիկ, որոնց հոգը չէ, սխալե՞ր են անցեալին, վնասե՞ր են մէկուն, խաբե՞ր են, դաւաճանե՞ր են, պարտքի դրամ առեր են ու չե՞ն վերադարձուցած... Կան այսպիսի մարդիկ ալ, որոնց համար

արժանապատուութիւն ըսուածը անիմաստ արժանիք մըն է:

Մարդոց տեսակներուն մասին կարելի է շատ երկար խօսիլ, սակայն ի՞նչ է պարագան պետութիւններուն... Պետութիւնները պատասխանատու են իրենց անցեալի արարքներուն համար, պատասխանատու են իրենց անցեալի սխալները սրբագրելու եւ անհրաժեշտ միջոցառումներ ձեռք առնելու, անցեալի մեղքն ու ամօթը վերացնելու համար:

Այստեղ ալ, մարդոց նման կը տարբերին վերաբերմունքները: Կան պետութիւններ, որոնք անցեալի սխալները սրբագրելուն մէջ բարոյական շահ կը տեսնեն առաջին հերթին, ինչու չէ՛ նաեւ գործնական՝ փոխարարբերութիւններու գծով: Ինչպէս որ Գերմանիան փորձեց հրեաներու ողջակիզման իր ճակատի խառանը ջնջել, Իսրայէլին հսկայ գումարներ վճարելով, համաշխարհային Բ. Պատերազմին ողջակիզուած հրեաներուն որպէս արեան գին: Կամ, ինչպէս Ֆրանսան Ալճերիոյ հետ իր յարաբերութիւնները բնականոնացնելու համար փորձեց անցեալի մէկ միլիոն ալճերիացի նահատակներուն արեան գինը վճարել ինչ-ինչ ձեւերով: Անշուշտ կարելի է այլ օրինակներ ալ յիշել, ուր ներկայի իշխանութիւնները, որպէս ժառանգորդները անցեալի իրենց նախորդներուն, ստիպուած կը համարեն սրբագրել անցեալի սխալները, եթէ անշուշտ իրենց համար արժէք ունի իրենց երկրին արժանապատուութիւնը եւ անշուշտ բազմակողմանի շահերը: Վերոյիշեալ օրինակէն մղոններով հեռու կը մնայ Թուրքիան, որ իր անցեալի ամենասեւ եջերը չի



փորձեր վերաքննութեան առարկայ դարձնել եւ սեւին թանձրութիւնը թէթեւցնել, փորձելով ճանչնալ Հայոց ցեղասպանութիւնն ու հատուցում կատարել, այլ ընդհակառակն՝ անցեալի ոճրագործները ի պատուի են ու կը փառաբանուին պետականօրէն: Անցնի՛նք:

Հիմա, գանձ մեր օրերուն, ուր Ֆրանսան ինչ միջոցներու կը դիմէ Հայաստանին օգնելու եւ բարեկամական կամուրջ նետելու երկու երկիրներուն միջեւ: 2018-ին Շառլ Ազնաւուրի մահուան ու թաղման առթիւ ձեռնարկուած պետական բարձրամակարդակ միջոցառումը աննախադէպ էր, ապա այս շրջանին Հայաստանին պաշտպանական զինամթերքի մատակարարումը, նոյն շրջանին Ազնաւուրի նկարով 100-նոց Եւրոյի թողարկումը, որպէս մեծ պատիւ անձին, իսկ ամենաթարմը՝ Միսաք Մանուշեանի եւ կնոջ աճիւններու փոխադրումը Ֆրանսայի «Անմահ» մեծագործներու պանթէոն:

Յարգելի Նախագահ Մաքրոն, ըրածներդ երախտագիտութեամբ կ'ընդունի հայութիւնը, յատկապէս Հայաստանի հայութիւնը, իսկ աշխարհատարած սփիւռքահայերը, իմա՛ կիլիկեցիները եւ Հայաստան հաստատուած կիլիկեցիներու շառաւիղները, ինչպէ՛ս ուրախանան, երբ յիշեն 1920-ի զիշերով խայտառակ փախուստը ֆրանսական բանակին Ատանայէն ու Մարաշէն, որուն հետեւանքով իր կողմէ խոստացուած, իր հոգատարութեան տակ ստեղծուող Կիլիկեան հանրապետութիւնը մէկ օր իսկ չապրեցաւ ու չքացաւ եւ հայերը նոր կոտորածի զոհ դարձան: Յիշե՛լ այնքան տարածուած Ատանայի երգը՝ «Ասպետական սեւ սատանան...» այդպէս կոչած էին «հոգատար» ֆրանսան... Հապա՛ Ալեքսանտրէթի պարպումը 1938-ին... հայաբնակ Ալեքսանտրէթի սանձաքը թուրքին յանձնուեցաւ, միայն Քեսապի շրջանը Սուրիոյ ձգելով: Թող այնձարցիները խօսին, որոնք հայրենիք կորսնցուցին ու եկան ապաստանեցան Լիբանան ու հիմնեցին իրենց գիւղը: Թող քեսապցիները խօսին, որոնց գիւղերը փրկուեցան, բայց արտերն ու այգիները մնացին թուրքին:

Միրե՛լ, թե՛ չսիրել, համլէթեան թնճուկին առջեւ կանգնած ենք՝ Հաւատա՛լ Ֆրանսային, յարգել ու երախտապա՛ ըստ ըլլալ, իսկ անցեալը թաղե՛լ: Այո՞, թե՛ ո՛չ:

Ե՞րբ պիտի հասկնանք, որ որեւէ դրական վերաբերմունք առ հայերն ու Հայաստանը ո՛չ մեր քրիստոնէայ ըլլալուն համար է, ո՛չ ալ մեր սեւ աչքերուն համար: Շա՛հ ունին, չունենան՝ չեն ըներ: Կռուախնձորը հիմա Կովկասն է, բոլոր մեծ պետութիւններուն աչքը Կովկասի վրայ է: Այսքանը գիտնալէ ետք, ճիշդ կողմնորոշուելու համար զգացումը չի բաւեր, բաւական խելք պէտք է:

## ՅԱԿՈՒՄ ՄԻՔՍԵԼԵԱՆ

### ԱՆՈՒՆ

*«Անուն կայ, որ վարդի բոյր է,*

*Կայ, որ անուշ մօր համբոյր է,*

*Լաւ անունը՝ պատիւը մեր,*

*Միշտ լաւ գործի ծնունդն անմեռ»:* Յ.Շ.

Անունը այն համատարած իմաստալից բառն է, որ մեզանից իւրաքանչիւրը ստանում է իր աշխարհ գալու պահից: Այն ցմահ ներկայացնում է մի անձ, էակ կամ առարկայ. ունի բազում այլ բովանդակութիւններ եւ նշանակութիւն: Այն նաեւ միջոց է հասարակութեան անդամներին զանազանելու միմեանցից: Չկայ մի ցեղ, որ այդ համամարդկային երեւոյթը չյարգի՝ իւրաքանչիւրը պահպանելով իր ազգի ոգին, ճաշակը եւ աւանդոյթը:

Դարերի ընթացքին հարեւան ազգեր, իրար հետ շփուելով, առանց դժուարութեան փոխանակել են անձնանունները եւ ծագումնաբանութեան տեսակով դժուար է նրանց տարբերել, մանաւանդ, որ երբեմն կապուած են լինում կենցաղային նմանութիւններին:



Հայկական համարուող անունների զգալի մասը, ինչպէս նաեւ մեր հարեւանների մօտ, ունեն օտար ծագում, որ ենթադրաբար կապուած է սեփական կրօն չունենալուն: Բոլոր քրիստոնէութիւն ընդունողների մօտ տեղի ունեցաւ անձնանունների մեծ հոսք՝ Հին ու Նոր կտակարանների թարգմանութեան առիթով: Կարելի է երեւոյթը բնական համարել, քանի որ հաւատքը իր դրոշմը դնելու էր եւ դարերի ընթացքին բազում ներթափանցած անձնանունների կողքին, միատեղ վերապրեցին նաեւ զուտ հայկականները, ինչպէս՝ Արմէնուհի, Հայկուհի, Հայկազն Սիրանուշ Ազատ, Արաքսի, Վարդանուշ եւ բազում ուրիշներ:

Ռուս-պարսկական պատերազմից յետոյ՝ 1829-ին, երբ Կովկասը դարձաւ ռուսական տարածք, հայկական հասարակութեան շրջանակում օտարամոլութիւնը դարձաւ ապրելակերպ, մինչեւ իսկ հպարտութիւն, որ առաջին հերթին իր ազդեցութիւնը ունեցաւ անձնանունների ընտրութեան ոլորտում: Ռուսական հնչեղութեամբ անուն-հայրանուններով դիմելաձեւեր ոչ միայն յարգելի, այլեւ պարտադիր ու ցանկալի էր: Այդ շրջանին էր, որ մեր անունների ցանկում յայտնուեցին ոչ-զտարիւն, բայց ռուսական հնչեղութեամբ անուններ՝ Նիկիտա, Իգոր, Սվետլանա, Նադեժդա, Իլյա եւ այլն:

Մեր մի բուռ երկրի հայեցի ապրելակերպի դիմագիծը մեծ նահանջ ապրեց բոլշեւիկեան համակարգի հաստատումով, երբ ամէն ինչ Մոսկուան էր որոշում, եւ մեր հայրենակիցները առանց որեւէ պահանջի յօժարակամ նախաձեռնում էին քայլեր մեր աւանդոյթներից հեռու: Այդպէս էր որ մշակոյթի առաջին նախարար Պօղոս Մակինցեանի նախաձեռնութեամբ Մանուկ Աբեղեանը ձեռնարկեց դասական հայերէնի ուղղագրութեան փոփոխութիւնը, որ դարձաւ չարիք:

Վարակիչ օտարամոլութիւնը այնքան ընդունելի եւ համապատասխան էր մեր մոլորուած հանրութեան ճաշակին, որ ռուսական ու օտար անձնանունների ներխուժումը եղաւ անարգել ու գրկաբաց:



Արագ, շատ արագ Աշոտին ու Անուշին փոխարինեցին՝ Արկաղին ու Նատաշան, Վիտալին ու Լիանան եւ բազում նման այլ անուններ: Կարելի էր այդ երեւոյթը ընդունել պարզօրէն, առանց վրդովմունքի, միայն թէ այն չմնաց առանց հետեւանքի. փոխեց մեր ազգային լեզուամտածողութիւնը եւ հայկական դպրոցների թիւը նուազեց յօգուտ ռուսականի: 90-ականներին էր, որ մտաւորականութեան առողջ մի մասը երազում եւ փափաքում էր, որ վերջապէս կը ստեղծուի հայկական միջավայր, եւ մեր ձեռքով կ'ունենանք մեր երազանքի «Հայաստան դրախտավայր»ը...աւա՞ղ: Երեւանի անգլիական համալսարանի հաստատումով՝ արդէն երկու ոտքից կաղ հայերէնը աւելի մեծ նահանջ ապրեց, եւ արդի մայրաքաղաքի դիմագիծը աւելի արեւմտեան է քան հայկական: Արդի պայմաններում ճիշտ հայերէն խօսողները հագուագիւտ են, ոչ միայն փողոցում կամ ընկերական շրջապատում, այլ նաեւ պաշտօնական ելոյթների ընթացքին, մինչեւ իսկ TV-ի հաղորդավարների եւ հրատիրուած անձանց կողմից եւ ... Ազգային ժողովում:

Տեսնելով մեր երկու նախագահների եւ նրանց կանանց անձնանունները՝ Ռոբերտ, Բելլա եւ Սերժ ու Ռիտա՝ չմոռանանք Արցախի Արկաղին ու Վիտալին, որոնց կարելի է կցել ոչ միայն մեր ԱԺի պատգամաւորների, այլ նաեւ ամէնուր տիրող Արթուր, Արտյոմ անձնանունով անձանց քանակը (որ դարձել է ազգային վարակ): Հետաքրքրութիւնից դրդուած փորձեցի համեմատական կարգով ստուգել, թէ ի՞նչ է մեր դրացիների մէջ վիճակը այդ ոլորտում: Ի զարմանս՝ վրաց եւ ազերի պատգամաւորների ցանկում ոչ մէկ օտարազգի անձնանուն տեսայ: Վրացի նախագահի անձնանունն է Մալոմէ, վարչապետինը՝ Իրակլի՝ զուտ վրացական ծագումով: Ազերի Հայդար Ալիեւին յաջորդեց որդին Իլիհամը, կնոջ Մեհրիբանի հետ բոլորը սելջուկ - թաթարական ծագումի:

Սխալ չէ ենթադրել, որ օտար անձնանունով մէկը անչափահաս տարիքից կամայ թէ ակամայ զգում է օտարութեան դրոշմը իր անձի եւ էութեան վրայ, որից ազատուելու հնար չունի:

Թերեւս ինչ-որ մի բան պակաս է մեր ազգային գիտակցութեան եւ ինքնաճանաչումի բնագաւառում: Ժամանակին մտաւորականներից ոմանք բազմիցս անդրադարձել են այդ խնդրին, որոնցից կարելի է յիշել ամենայն հայոց Թումանեանին, Շիրազին, իր «Մարդկանց անունները»  
պոեմի պատգամով՝  
«Քանզի ամէն ազգի անուն՝ իր տարագն է, իր իսկ լեզուն», իսկ Հրաչեայ Աճառեանը, խնդիրը առաւել կարեւոր համարելով, հայ անձնանունների հինգ հատորանոց ծագումնաբանութեան բառարան է կազմել, ուր տեղ են գտել դարերից ի վեր գոյութիւն ունեցող բոլոր անունները: Կը լինի՞ արդեօք վերադարձ:

15-2-24

Ռուբէն Յովակիմեան- Սէն Ռաֆայել

## ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

### ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



#### ՎԵՅ ԲԱՐՁՈՒՆՔԷՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Տարիներուս վեհ բարձունքէն,  
Հիմա աշխարհն այլ կ'երեւի,  
Զերթ հորիզոնն որ շառագունի  
Հրաժեշտ առնող բորբ արեւէն:

Այգաբացին՝ ճամբայ ելայ,  
Արեւներուն ես սիրահար,  
Ներսս՝ արեւ, դուրսս՝ արեւ,  
Հրկիզուեցայ իր տաք շունչէն:

Շուտով արդէն կէսօր էր, տապ,  
Բայց դեռ արեւ էր հուրհրան,  
Եւ իրիկունն ու գիշերը՝  
Հեռու էին, զերթ աստղերը:

Տակաւ խոհը իջաւ դանդաղ՝  
Վերջալոյսին հետ մարմրուն,  
Ծառիս շուքը երկարեցաւ,  
Յուշեց հրաժեշտը տրտմանու...

Քաղցր թախիծ մը պարուրեց  
Հոգիս, սիրտս, մշուշի պէս,  
Որուն տակ նոյն խենդ սիրտս էր,  
Որ կը տրոփէր պարմանի պէս:

Հիմա շքեղ մայրամուտ է՝  
Հրդեհներով ծիրանավառ,



Որ դեռ անուրջ ունի լուսէ  
Հորիզոնին ոսկեշառայլ...

Օ, չմեռնէ՛ր իմ երագս,  
Նոյնիսկ եթէ գիշեր իջնէ,  
Մութը պատէ ողջ աշխարհը,  
Երագը միշտ կ'ապրի անմեռ:  
24/2/2021

.....

ՊՈՌՆԻԿ ԱՇԽԱՐՀ

Պտոնի՛կ աշխարհ, քեզ լաւ ճանչնանք  
Մեր պատմութեան բիւր էջերէն,  
Դուն ոսկիի լեզուն գիտես,  
Շահի լեզուն անփառունակ:

Ի՞նչ հասկնաս դուն ոգիէն,  
Արժէքներէն, վեհ իտեպէն,  
Արդարութեան վսեմ կանչէն,  
Ճշմարիտէն ու պատիւէն:

Նախի համար պատիւ ծախես,  
Մամոնային ծունկդ չոքես,  
Ոսկի հորթին լոկ ծառայես,  
Յետոյ խօսիս իրաւունքէն...

Եւ տակաւին կը ձեւացնես  
Որ բազինին ազատութեան,  
Դուն պատրաստ ես կեանքդ զոհել,  
Մինչ ամէն պահ կը ստրկանաս  
Շահերուդ սին՝ հաշիւով նենգ...

Եւ կ'անտեսես արդա՛րն իրաւ,  
Զայն կոխկոտես այնքան դիւրաւ,  
Երբ քու շահդ այդ պահանջէ...

Պտոնի՛կ աշխարհ,  
Պիտի հնձես ա՛յն ի՛նչ ցանես,  
Գոնէ սթափուէ, զգաստացիր,  
Սա պահն է քու հոգեդարձիդ,  
Մարդկայնութեան շա՛ղին լուսէ:  
18/10/2021

.....

ԴԵՌ

Ուրախութեանս լոյսէն անբաժան  
Եղաւ միշտ ստուերը դալուկ տրտմութեան,



Ծիծաղիս հետ միշտ լացիս արցունքն էր,  
Թախիծիս մէջ միշտ բերկրանքի շողն էր:

Ուրիշին ցաւին եղայ բաժնեկից,  
Խնդութեամբն անոր ես ուրախացայ,  
Բայց բիրտ սիրտերու շատ հանդիպեցայ,  
Որոնք քար սիրտով նայեցան ցաւիս:

Դեռ երագն ունիմ անհունին անծիր,  
Նոր գարուններու զարթօնքին վառման,  
Ուր մարդ էակը պիտ' վերածընի  
Ազնիւ ու շիտակ, զթառատ, արդար...

Պիտի թրթռայ սիրտով պարմանի,  
Պիտ' փարի մարդուն սեր-գորովով լի,  
Պիտի խորզայ բազկերակն այլոց,  
Տիեզերքն անհուն գրկէ թելերով...

Ու թէեւ զիտեմ խորխորատն անհուն  
Տառապանքին սել մարդկային կեանքին,  
Որ բաժին ինկաւ իմ ժողովուրդիս,  
Դեռ կը հաւատամ կեանքին հրաշալոյս:

28/1/2024

.....

ԱԶԳԻՍ ՅԱԻԵՐԺԱԿԱՆ

Անդունդներէն վեր խոյացող ճախրանքը կայ

Իմ հոգւոյս մէջ,

Խաւարամած գիշերէն ետք, լուսաբացը

Ճաճանչահել...

Զմեռն ու ցուրտը թօթափած, իմ մէջ գարուն

Կայ բողբոջած,

Գետերու բորբ շառաչը կայ երակներուս

Մէջ հնամեայ...

Մահերէն ետք Մեծ Եղեռնի, յարութեան շունչ



Կայ հրաշափառ,

Որ աւիշով մը կենսայորդ երակներուս

Նոր կեանք կու տայ...

Բայց չարին դէմ, անիրաւին, անդունդներուս

Սարսափը կայ,

Ուր թաւալզոր ան պիտ' իյնայ, իր սեւ թոյնով

Ի չիք դառնայ...

Ուղեւորն եմ ես անյոգնում դէպի Լոյսը

Ճշմարտութեան,

Ու չկայ վերջ իմ ուղիիս, դէպ' յաւերժը

Անեզրական...

28/5/2022

.....

ԲԱՐԻ ԵՎԱՐ, ԳԱՐՈ՛ՒՆ

Գո՛յն-գո՛յն հեղեղ մըն է յուրթի  
Ծաղիկներու գեղածիծաղ,  
Միրոյ տօն է, խինդ ու կեանքի,  
Բարի՛ եկար, գարո՛ւն վարար...

Կապոյտ երկինքն ժպիտ ունի,  
Անամպ շողայ արեւն բարի,  
Լոյսի բերկրանք է ցնծագին,  
Բարի՛ եկար, գարո՛ւն լոյսի...

Զարթօնքի շունչ կայ ամենուր,  
Կը բողբոջին ծառերը մերկ,  
Զուարթ հագնին ծիլ ու տերեւ,  
Բարի՛ եկար, գարո՛ւն աղուոր...

Շառաչը կայ առուակներուն,  
Դայլայլը կայ թռչուններուն,  
Երգ է հնչեղ, մեղեղի է,



Բարի՛ եկար, գարուն, սէ՛ր ես:

18/3/2023

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## ՄԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ ԿԻՆՈՀԱՆՃԱՐԸ 100 ՏԱՐԵԿԱՆ Է

### ԳԵՂԱՐԴ

Նառա Դանիէլեան, Երեւան, 31 յունուար 2024



«Մի հրաշագործ, որ ոչնչից կարող է կերտել ամէն ինչ, մի խենթ, որ վարդերի ճամբան մի կողմ թողած, բոբիկ ոտքերով քայլում է, քայլում է կրակների, փշերի վրայով», – կինոբեմադրիչ Հենրիկ Մալեանի բնորոշումն է Մերգէյ Փարաջանովին:

Տարին յոբելեանական է կինոյի հանճար Մերգէյ Փարաջանովի համար. կինոյի հարիւրամեայ վարպետին նուիրուած յոբելեանական միջոցառումներ են նախատեսուում ողջ տարուայ ընթացքում:

Մերգէյ Փարաջանովը (Սարգիս Յովսէփի Փարաջանեան) ծնուել է 1924 թուականի յունուարի 9-ին Թբիլիսիում: 1946 թուականին ընդունուել է Մոսկուայի Գերասիմովի անուան կինեմատոգրաֆիայի համառուսական պետական հիմնարկ: Աւարտելով հիմնարկը, Փարաջանովն ընդունուել է Կիեւի գեղարուեստական ֆիլմերի ստուդիա՝ որպէս բեմադրիչ: 1963 թուականին Մերգէյ Փարաջանովը սկսեց ստեղծել «Մոռացուած նախնիների ստուերները» ֆիլմը, որը հետագայում դարձաւ համաշխարհային կինոյի Ոսկէ ֆոնդի մի մասը: Փարաջանովը շնորհաւորանքներ էր ստանում Ֆելլինիից, Անտոնիոնիից և աշխարհահռչակ այլ կինոգործիչներից: Բացի «Նոան գոյնը», «Յակոբ Յովնաթանեան», «Սուրամի ամրոցի լեգենդը», «Աշուղ Ղարիբը» և այլ հանճարեղ ֆիլմերի հեղինակը լինելուց, Մերգէյ Փարաջանովը ստեղծել է նաև մի շարք համապատկերներ (կոլաժներ), որոնց մի մասը վարպետը պատրաստել է թափոններից: Փարաջանովը մահացել է 1990 թվականի յունիսի 20-ին՝ Երեւանում: Թաղուած է հայոց մայրաքաղաքի Կոմիտասի անուան զբոսայգու Հայոց մեծաց պանթէոնում: 1991 թուականի յունիսի 27-ին Երեւանում բացուեց Մերգէյ Փարաջանովի տուն-թանգարանը և շիրիմին դրուեց նրա կիսանդրին: 2017 թուականի նոյեմբերի 29-ին Երեւանի ասագանու որոշումով, թանգարանին կից փողոցն անուանակոչուել է նրա անունով:

## ՇՆՈՐՀԱՆԴԷՍ՝ Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻԻ «ՀԱԻԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ» ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ԱՂՕԹԱԳԻՐՔԻ 12-ՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Միատեղ Լիբանանի մէջ Միխիթարեան Միաբանութեան հայրերու եւ Հայկազեան համալսարանի, Ուրբաթ, 1 Մարտ 2024ի երեկոյեան ժամը 7:00ին, Հայկազեան համալսարանի հանդիսասրահին մէջ բարձրորակ մակարդակով տեղի ունեցաւ Սուրբ Ներսէս Շնորհալիի «Հաւատով Խոստովանիմ» բազմալեզու աղօթագիրքի շնորհանդէսը:



Հանդիսութիւնը իւրատեսակ ձեռնարկ էր՝ ե՛ւ շնորհանդէս, ե՛ւ յարգանքի տուրք՝ այն հոգեւորական տիտանին, որ իր շարականներով, աղօթքներով եւ հոգեպարար երգերով, ութուկէս դար հաւատքի եւ գոհաբանութեան ամենօրեայ աղօթքը դարձաւ Հայ ազգի զաւակներուն համար:

Սոյն յուշ երեկոն իրենց ներկայութեամբ պատուեցին՝ բարձրաստիճան հոգեւորականներ, շ.շ. Հիւպատոս

Լեոնարտ Ապաճեան, քաղաքական, պետական եւ ազգային գործիչներ, ինչպէս նաեւ կրթական մշակներ, մշակութային միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Յայտագիրը սկսաւ Հայաստանի եւ Լիբանանի քայլերգներով, օրուան հանդիսավար՝ օրդ. Ալին Բանոյեան, բեմ հրաւիրեց Միխիթարեան Միաբանութեան Միջին Արեւելքի փոխ Մեծաւոր եւ Ռաուտայի Միխիթարեան վարժարանի տնօրէն՝ Հայր Կորիւն Ճէնանեանը:

Ան դիպուկ, տպաւորիչ եւ այժմեական բնոյթ կրող բացման խօսքով ներկայացուց Շնորհալիի օրինակը գրաւական յաւերժութեան:

Շ. Կորիւն անցեալը ներկային շաղախելով ըսաւ.- «Ութուկէս դար, Երկրէն դէպի երկինք, Արարչին որպէս փառաբանութիւն եւ երախտագիտութիւն՝ հաւատքի զօրութեան խնկաման մը դարձած է «Հաւատով խոստովանիմ»ը, իսկ «Առաւօտ Լուսոյ» մեսրոպատառ այբբենականի հերթականութեամբ գրուած հոգեպարար երգը՝ Լուսաւորչի կանթեղին մէջ շիթ առ շիթ ծորացող ձէթն է»:

Միխիթարեան Միաբանութեան Միջին Արեւելքի Մեծաւոր՝ Հայր Մեսրոպ Վրդ. Միլլահեան, հաճելի ոճով եւ պատկերաւոր ներկայացուց Շնորհալիի կերպարը իր յատկանշական գիծերով:

«Շնորհալի բացի հոգեւորական ըլլալէ, զարգացած, լայնախոհ եւ քաղաքական գետնի վրայ իր ժամանակաշրջանի ամենաշխոյժ հաշտարարի դեր ունեցող բանիմաց գլխատառ մարդն էր: Անոր վարքը եւ բեղուն առաքելութիւնը նախաինսամութեան կողմէ ի սկզբանէ ծրագրուած եւ ի գործ դրուած էր:

Ս. Ղազար մայրավանքէն ժամանած Միխիթարեան Միաբանութեան ուխտէն՝ Շ. Մերոբ Վրդ. Չամուրլեան, «Բազմավէպ»ի խմբագիրը, պատմական ակնարկով ծանօթացուց, թէ ինչպէս Միխիթարեան միաբան Հայր Յարութիւն Ազգերեանի մտայղացումով ծնունդ առաւ «Հաւատով Խոստովանիմ»ի բազմալեզու թարգմանական աշխատանքը 1808ին:

Սկիզբը վեց լեզուներու թարգմանուած գիրքը, այսօր յիսուն լեզու կը հաշուէ իր տասներկրորդ տպագրութեամբ:

Հայր Սուրբը բարձր գնահատեց Միխիթարեան միաբաններու անխոնջ, պատասխանատու եւ նուիրական ծառայութիւնը, որուն հիմնական նպատակը եղած է Շնորհալի Հայրապետի աղօթքը տարածելը հայ ժողովուրդի զաւակներուն եւ օտար ազգերուն մէջ:

Վարդապետը, փաստացի վկայութիւններ թուարկելով հաստատեց անոր հրաշագործ զօրութեան մասին:

Դոկտ. Անդրանիկ Տազէսեան՝ Հայկազեան համալսարանի դասախօս եւ «Հայկազեան Հայագիտական Հանդէս»ի խմբագիր, իր իւրայատուկ ոճով եւ մասնագիտական վերլուծութեամբ մեկնաբանեց Շնորհալին եւ իր տեսադաշտը խորագիրը կրող երեք ելակէտերը՝ «Առաւօտ Լուսոյ», «Հաւատով Խոստովանիմ» եւ «Թուղթ Ընդհանրական»ը:

Դ. Տազէսեան Ամփոփելով իր խօսքը ըսաւ.- «Շնորհալին, ի տարբերութիւն իր ժամանակակիցներէն շատերուն, կեանքը տեսաւ մեծ պաստառին վրայ, ուր ընդգրկուած է ոչ միայն իր գիւղը, այլեւ հայ շինականը, ոչ միայն քաղաքը, այլեւ քաղաքացին, այլեւ երկիրը, մարդկութիւնը: Ան զանոնք տեսաւ իրենց ձգտումներով ու երազներով, իրենց մեղքերով ու տառապանքներով, ու այս բոլորին իբրեւ սպեղանի ան հրամցուց իր «Թուղթ Ընդհանրական»ը, ուր հաւատով խոստովանիմի նման ընդհանրական քո արարածոցը չէ, այլ որոշակի կին, քաղաքաբնակ անհատ, իշխանաւոր ու զինուոր, որոնց երաշխաւորեց քրիստոնէական վարդապետութեամբ»:

Լիբանանի Միխիթարեան դպրեվանքի ժառանգաւորները, գեղեցիկ հնչողութեամբ երգեցին Շնորհալիի «Առաւօտ Լուսոյ» հոգեպարար երգը, Միխիթարեան ւանդակական երաժշտութեամբ:



Հայկազեան համալսարանի նախագահ Վերապատուելի դոկտ. Փօլ Հայտոսեան եզրափակելով օրուան հանդիսութիւնը, յոյժ գնահատեց եւ ջերմապէս ողջունեց Շնորհալիի ուղիով միաբանուած հոգեւոր եղբայրներն ու ներկաները: Ան շեշտեց որ այսօրուան աշխարհին մէջ, ուր մարդիկ կ'ապրին ինքնարդարացումի կեանք մը կը պակսի գոյում եւ խոստովանութիւն: Ան փորձելով

այժմեականացնել Շնորհալիի անկրկնելի աղօթքը, օրինակ բերաւ ըսելով, որ արդէն վերջին 4 տարիներու ընթացքին Լիբանանի տառապանքը չկարգաւորուեցաւ, քանի որ չկայ գոյում, չկայ մեղքի զգացում եւ չկայ խոստովանութիւն:

Յայտագրի աւարտին տեղի ունեցաւ յուշանուէրներու բաշխում, որ երախտագիտութեան գեղեցիկ արտայայտութիւն մըն էր այս ձեռնարկի կազմակերպման իրենց նպաստը բերած մտաւորականներուն եւ հոգեւորականներուն:

Օրուան ձեռնարկը աւարտեցաւ համալսարանի պարտեզին մէջ հիւրասիրութեամբ եւ Շնորհալիի նորատիպ աղօթագիրքի օրինակներու բաշխումով:

«Հաւատով Խոստովանիմ»ի էջերը պիտի աղաղակեն մեր ժողովուրդի խարսխուած հաւատքի զօրութիւնը առ Աստուած եւ հայու լուսաբաղձ ոգին թեւ պիտի առնէ եւ ջերմութեամբ պիտի ողողէ համայն քրիստոնէայ աշխարհը:

Ս. Ներսէս Շնորհալի եւ իր նման հրաշագործները իրենց յաւերժական ներկայութեամբ մեզի պիտի առաջնորդեն դէպի անմահութեան գիրկը:

Փառք ու պատիւ այն թարգմանիչներուն, որոնք անշշուկ տքնաջանութեամբ տիեզերական աշխատանք տարին:

## «ԵՍ ՍԱՐԷՆ ԿՈՒ ԳԱՅԻ»

ԿԱՐՕ ՊՈՆՃԱԼԵԱՆ

Մեթրոն ցնցուեցաւ ու ճամբայ ելաւ Պուլաքի մեկնակէտէն :

Օրօրուելով անցաւ Էլ Կալսա փողոցէն, դարձաւ աջին եւ առանց աճապարելու մտաւ Պապ Էլ Հատիտի հրապարակը :



Երկաթուղիի գլխաւոր կայարանին դիմաց, մայթերուն գրեթէ քսուելով, սուլեց ու բարեւեց Ռամսէս Բ.ի քարէ արձանին եւ փորձեց արագ առաջ անցնիլ, բայց իրար խաչաձեւող երկաթէ գիծերուն վրայ անիւները վայրկեան մը չխրկացին եւ դժուար սահեցան :

Ռամսէսը չլսեց անոնց չխրկոցը ու քարէ պաղ նայուածքով, անտարբեր, դիտեց մեթրոյին հեռանալը : Ես այդ պահուն պատուհանին քով գուգահեռ նստած՝ գոց ապակիին ետեւէն յիշողութեանս հին էջերը կը բանայի :

Դիմացիս նստարանը պարապ էր :

Երգի կտոր մը առտուրնէ ի վեր, մօրս ձայնով մտքիս մէջ կ'երթար կուգար եւ Վալս կը պարեր: Հիմա մեթրոյին շարժումներէն ան յանկարծ արթնցաւ ու դարձեալ երգել սկսաւ:

Պարի քայլերը, եղանակի կշռոյթին հետ չափ կը պահէին եւ օրօրուելով, աչքիս առջեւ հանդարտ կ'ելլէին ու կ'իջնէին ....

- Մէկ երկու երեք ....

- Մէկ երկու երեք ....

Երգը հեռու օրերէ կու գար եւ մօրս գիտցած տարբերակով շատ երգուած էր մեր տան մէջ : Բայց հակառակ իր թեթեւ եւ ուրախ եղանակին, ինծի տխուր կը թուէր որովհետեւ անոր մէջ չարչարուած սիրահար մը, իր հալոտող-տանջոտող սրտի մասին կը պատմէր իրմէ երես դարձուցած սիրածին ....

Բայց երգը գեղեցիկ էր ու պարզ եւ պատանեկան սրտիս շատ կը խօսէր:

Այդ երգը ուրիշներ ալ կ'երգէին, բայց մօրս երգած Վալսի գեղեցիկ տարբերակը, ես միայն տարիներ յետոյ ծանօթ երգիչ Ալիք Կիւնէշեանէն լսեցի: Ան հին էր: Շինուած՝ ինծի անյայտ ժամանակներէ եւ կապոյտ ծովերէ ալ անդին, ուր հովերը դաշտերու եւ լեռներու վայրի ծաղիկներուն վրայ, մեր լեզուով կը փչէին ու կ'երգէին :

Երգը սիրային էր անկասկած եւ մանկութեան օրերէ՝ ծանօթ էր ինծի :

- Ես սարէն կու գայի

Դուն դուռը բացիր

Ձեռներդ ծոցիդ,

Ա՛խ ըսիր ու լացիր ...

Հիմա մեթրոյի պատուհանին առջեւ երգող ձայնը դեռ մօրս էր, սակայն անոր ընկերացող տեսարանը, գիծերու դարձուածքի մը անկիւնը, յիշողութեանս մէջ յանկարծ փոխուեցաւ :

Տօնական օրերու մօտ էր ...

Երգը այս անգամ մեր տան խոհանոցէն կու գար ականջներուս :

Քովի սենեակին մէջ, ես յաջորդ օրուայ դասերս կը պատրաստէի եւ առանց խանգարուելու, երբեմն մտովի կը հետեւէի եղանակին : Մօրս ձայնը անուշ էր, օրօրոցի օրերէս գիտէի, որ անուշ էր :

Ան երգի սիրահար էր, եւ աշխատած ժամանակ կը սիրէր երգել ազգային, սիրային, կամ նոյնիսկ դպրոցը մեր սորվածներէն հին ու նոր շատ երգեր :

Մեթրոյին մէջ մօրս ձայնով մէկ երգէն միւսը կ'օրօրուէի, երբ յանկարծ ետեւէս անունս լսեցի :

- Կարօ՛ ...

Յիշողութեանս թելը վայրկենաբար կտրուեցաւ :

Ձայնը ծանօթ էր : Դարձայ ու յանկարծակի եկած

- Օ՛ պրն Քրիսեան,- ըսի եւ ոտքի ելայ :

Նախկին մարզանքի ուսուցիչս դիմացիս պարապ նստարանին վրայ տեղ գրաւեց եւ հասակիս նայելով, ուրախ



- Երկնցէ՛ր ես , - ըսաւ

Յետոյ ձեռքով նստարանս ցոյց տուաւ եւ

- Հրամէ՛, նստէ,- աւելցուց

Դպրոցը ամեն վեց ամիսը անգամ մը, մարզանքի դասի պահերուն, ան կշիռք եւ հասակ չափող փայտէ ձող մը դասարան կը բերէր ու կ'արձանագրէր իւրաքանչիւրիս հասակը, ծանրութիւնը, եւ կուրծքի շրջածիրը :

Գրեթէ երեք տարի կ'ընէր որ զինք չէի տեսած :

- Ինչպէ՛ս ես, այս որքա՛ն ատեն է,- հարցուց դէմքս դիտելով

Հանդիպումը մեր երկուքին համար ալ անակնկալ էր :

Նստած տեղէն առջեւ ծռեցաւ, եւ անհուներու ձայնէն լսելի դառնալու համար, քիչ մը բարձր,

- Ի՞նչ ըրած ես Գալուստեանէն վերջ,- հարցուց :

- Գալուստեանէն վե՛րջ ....

Երկու տարի յաճախած էի St George's College ը, արձանագրուած Ամերիկեան համալսարանը, եւ հիմա տարի մը կ'ընէր որ եղբօրս քով ժամագոծութիւն կը սորվէի ...

Չհասկցաւ :

- Ժամագործութիւ՞ն ըսիր .... հապա համալսարա՞նը,- հարցուց :

Բացատրեցի որ համալսարան վերջացնելը քանի մը տարուայ ժամանակի կը կարօտէր, իսկ մենք ժամանակի տեղ տարբեր ծրագիրներ ունէինք :

- Ի՞նչ ծրագիրներ ....

Ես այդ հարցումին կը սպասէի եւ գիտէի որ պիտի գար : Անմիջապէս մեծ խանդավառութեամբ ու քիչ մըն ալ յոխորտանքով, պատմեցի թէ պիտի երթայինք ծովերէն անդին հեռու տեղեր, ուր կեանքը աւելի խաղաղ էր ու արեւը իր ճառագայթներով ամէն օր կանանչ կը ներկէր դաշտի բոյսերը ....

Բայց այս ոգեւորուած նկարագրութեանս ընթացքին, վայրկեան մը անդրադարձայ, որ պրն Քրիստեանին դէմքէն ժպիտը կամաց կամաց կ'անհետանար, ու ես քիչ վերջ, իր թափանցող նայուածքին մէջ կասկածի փայլ մը տեսնել կարծեցի :

Բայց ան համբերութեամբ մտիկ ըրաւ բոլոր պատմածներս եւ երբ վերջացուցի

- Իսկ ի՞նչ բան կը վստահեցնէ ձեզի, որ կեանքի պայմանները օր մը հո՛ն ալ պիտի չփոխուին,- հարցուց :

Շիտակը այս հարցումին չէի սպասեր, նեղուեցայ :

Ես կը սիրէի պրն Քրիստեանը եւ իր շատ տրամաբանական հարցումէն անմիջապէս զգացի թէ ինք համամիտ չէր մեր գաղթելու գաղափարին :

Ան տարբեր կը մտածէր եւ կը պատճառաբանէր, որ գաղութին թիւը կրնար նուազիլ, ու երկրին մէջ տկարանալ : Ինք մտադիր չէր տեղէն շարժելու եւ կը խորհէր թէ դժուար օրերը դեռ կը փոխուէին ու չէր արժեր անոնց պատճառաւ ուրիշ երկիրներ գաղթել : Թերեւս իրատունք ունէր : Ըսածներուն մէջ շիտակ կէտեր կային, եւ յատկապէս գաղութի մասին ունեցած մտահոգութիւններն ալ արդարացի կը գտնէի : Բայց նկատի պէտք է առնուէր նաեւ, որ մենք գաղթելու որոշումը կամքէ անկախ պատճառներով առած էինք եւ հաճոյքով չէր որ կեանքը ուրիշ տեղեր ծայրէն սկսելու պիտի երթայինք :

Սակայն նախկին ուսուցիչս հասկնալիօրէն նեղուած էր: Հասկնալի էր եւ յատկապէս դժուար էր փայլուն չեղող ժամանակներու մէջ գաղութին պարպուելուն ականատես ըլլալ ու չնեղուիլ: Բայց գաղութն ալ չտկարանալու համար ամէն գնով հոն մնալն ալ կարելի չէր : Խօսակցութիւնը դեռ երկար տեւեց, սակայն ատեն մը վերջ պրն Քրիստեանը նստարանին մէջ ետ քաշուեցաւ, եւ չհամակերպած ու չհաշտուած՝

- Ես օրը օրին կ'ապրիմ,- ըսաւ, ու կոնակը յենարանին կոթնցուց :

- Մեթրոն կը շարունակէր օրօրուիլ, եւ հիմա Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին առջեւէն կ'անցնէր :



Մենք սկսանք ուրիշ բաներու մասին խօսիլ :

Երկինքէն, ամպերու դէմ կռիւի դաշտէն քաշուող արեւ մը, պատուհանէն թափանցած իր ճառագայթները ետ կը կանչէր :

Դեկտեմբեր ամսուն մէջ էինք :

Մեւ ամպեր իրար միացած եւ խոշորցած, տեղ տեղ թանձրացած ալ էին :

Շատ չանցած մեթրոն վազքը դանդաղեցուց եւ յաջորդ կայարանին մօտեցաւ :

Հոս պետք էի իջնել : Հրաժեշտ առի նախկին ուսուցիչէս եւ Ղամբայի կայարանը դուրս ելայ մեթրոյէն :

Պրն Քրիստեանին հետ այս հանդիպումս անսպասելի եղած էր :

- Ուրկէ՛, ուր ...

- Մեր վերջին հանդիպումը, մտածեցի .....

Փողոցին մէջ ցուրտ էր, արեւ չկար եւ հով կար: Բայց ես ներքնապէս ուրախ էի : Մենք մօտ ատենէն պիտի մեկնէինք եւ երթայինք հարաւի մեծ երկիրը, ուր կ'ըսէին թէ խոշոր կարմիր, կապոյտ թութակներ եւ գունաւոր կտուցներով թռչուններ, արեւին տակ ուրախ, գոյնզգոյն ձայներով կ'երգէին:

Կարօ Պօհճալեան

Քամփինաս, Պրագիլ

Հատուած՝ «Ես սարէն կու գայի» գրութենէն:

## ՊԱՆԹԵՈՆ



Ֆրանսայի ազգային հերոս Միսաք Մանուշեանի՝ անզիջում պայքարը բռնութեան դէմ ո՛վ պիտի հասկնար աւելի քան նոյն ինքը՝ պատանի Միսաքը, որ ունէր ընտանիք ու երդիք, բայց միլիոնաւոր հայրենակիցներու հետ ինք ալ անցաւ Եղեռնի եաթաղանէն, տեսաւ զուլում ու թաւալում կէանքերու, մայրը սովամահ, հայրը սպաննուած:

Արդարութիւնը՝ պատանքուած:

Փոթորկալից կեանք մը եղաւ իրը, անհամար կայքերով: Առաջնորդ ու կամաւոր, անվեհեր ու անձնուէր, մահուան սպառնալիքներէ մազապուրծ մնացած, մինչեւ որ մատնութեամբ մը ձերբակալուեցաւ ու զնդակահարուեցաւ գաղափարի 22 ընկերներուն հետ, 21 Փետրուար 1944ին:

Իր սպանութեան ութսուներորդ տարելիցին, այս ամսու քսանմէկին, Ֆրանսայի նախագահ Մաքրոնի գլխաւորութեամբ եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի ներկայութեամբ, Միսաք Մանուշեանին մատուցուեցաւ գերագոյն յարգանք, երբ իր եւ տիկնոջ աճիւնները ամփոփուեցան Փարիզի Պանթեոնին մէջ, միա՛կ «օտար»ները ութսունմէկ մեծանուն ֆրանսացիներու կողքին:

Միսաք Մանուշեան Գաղափարի մարտիկ էր եւ բանաստեղծ: Պանթեոն հասած իր ամփոփուած աճիւններուն մէջ կը հաւատամ թէ խորհրդանշականօրէն կա՛ն անհետ կորսուած աճիւնները նահատակուած ֆետայիներու, ազատամարտիկներու, մտաւորականներու եւ գրողներու, որոնք իրենց կարգին՝ ազգային հերոսներ էին, բայց շիրիմ իսկ չունեցան:

Փառաց պսակ՝ հերոսահոյլերու անսակարկ կէանքին:

\*\*\*

Վեհանոյ՜ թեքեան



(Դիմատետրի իր էջէն)

Մահապատիժի գործադրութենէն առաջ Միսաք Մանուշեան գրեց այս նամակը իր կնոջ՝ Մելինէին.

«Քանի մը ժամ ետք այլեւս այս աշխարհէն կը հեռանամ: Այսօր կէսօրէ ետք ժամը 3:00-ին պիտի գնդակահարուինք: Չեմ հաւատար, այսուհանդերձ, գիտեմ, որ այլեւս քեզ պիտի չտեսնեմ: Ինչ կրնամ գրել քեզի, ամէն ինչ անտրոշ է մէջս եւ պայծառ միաժամանակ: Ֆրանսայի ազատագրութեան բանակին մէջ մտած էի իբրեւ կամաւոր զինուոր եւ կը մեռնիմ գաղափարիս համար: Երջանկութիւն անոնց, որոնք պիտի ապրին մեզմէ ետք եւ պիտի վայելեն վաղուան ազատութեան եւ խաղաղութեան անուշութիւնը: Վստահ եմ, որ Ֆրանսայի ժողովուրդը ազատութեան համար պայքարող ընկերներուն յիշատակը պիտի գիտնայ պատուել արժանավայել կերպով: ... Բարեկամներուս օգնութեամբ, որոնք, վստահ եմ, որ պիտի չզլանան եւ պիտի ուզեն պատուել զիս, տպել կու տաս բանաստեղծութիւններս, որոնք արժանի են կարդացուելու: Եթէ կրնաս յիշատակներս տար Հայաստան: Քիչ յետոյ կը մեռնիմ 22 ընկերներուս հետ, քաջութեամբ եւ հոգիի խաղաղութեամբ մարդու մը, որուն խիղճը հանգիստ է, որովհետեւ անհատապէս ոչ ոքի զէշութիւն չեմ ըրած եւ եթէ ըրած եմ, եղած է առանց ոխի: ... Բոլոր անոնց, որոնք ինձի զէշութիւն ըրած են կամ ուզած են ընել, բոլորին կը ներեմ, բացի այն անձէն, որ մեզի դաւաճանեց, իր մորթը վերագտնելու համար եւ անոնց, որոնք մեզ ծախեցին: Ուժգնօրէն կը համբուրեմ քեզ, ինչպէս եւ քոյրդ եւ բոլոր ընկերները, որոնք զիս կը ճանչնան հեռուէն կամ մօտէն, կուրծքիս կը սեղմեմ բոլորդ, մնաք բարով»:

\*\*\*\*\*

Միսաք Մանուշեանի բանաստեղծութիւններու ժողովածուն լոյս տեսաւ 1947-ին, Փարիզի մէջ, եւ 1956-ին վերահրատարակուեցաւ Երեւանի մէջ:

## ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Ազգը, ժողովուրդը գերազանցօրէն ՈԳԻ է, դարերու, հազարամեակներու ճանապարհ անցած, տառապանքներէ թրծուած, վերքը երգի վերածած, անբեկանելի այն ՈԳԻՆ, որ դէռ կը պայքարի յանուն իր ազատ ու արդար կեանքի, յանուն իր լեզուի ու մշակոյթի, յանուն իր հայրենեաց հողին, որուն մէն մի բեկորը սուրբ է, շաղախուած ըլլալով իր մեռելներու աճիւնով, իր քրտինքով, արիւնով ու արցունքով...ԱԶԳԸ հազարամեակներու տարիք ունի եւ վատ տեսիլքը նոր հազարամեակներու, ապրելու եւ ստեղծագործելու անկոտորում կամքով, անընկճելի կորովով...Տուեալ պահին, հասարակաւորութիւնը կրնայ սխալներ թոյլ տալ, ԱԶԳԸ վեր է հասարակութենէն, ամբոխէն եւ ունի ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ:



.....

Ինքնաճանաչման ընթացքը համակ կեանքի մը ուղին է, որ վերջ չունի, քանզի ամէն օր բան մը կը յայտնաբերենք մեր մարդկային եւ ազգային էութենէն: Գիտակցութեան նոր կայծ մը, զգացումի նոր թրթիռ մը, հոգիի նոր թոփչք մը եւ այսպէս վերստին ու վերստին կը ճանչնանք մենք զմեզ, կը վերանորոգուինք եւ կը հասունանանք ալ ներքնապէս:

Անձիր ու անպարագիծ է ինքնաճանաչման ընթացքը, որուն համար անչափ էական է բաց պահել մտքի, հոգիի եւ սրտի դռները:

.....

Ան որ արդար չէ ինքն իր մէջ, ինքն իր հետ, ինչպէ՞ս կրնայ արդարութիւն ակնկալել, պահանջել ուրիշներէն: Եթէ մէկը անիրաւ է, կեղեքող, վաշխառու, ինչպէ՞ս կրնայ պահանջել որ ուրիշը ըլլա՛յ իրաւայարգ, արդարամիտ: Եթէ մէկը անբարոյ է, ուրիշին իրաւունքը խլող, թալանող, բռնակալ, ինչպէ՞ս կրնայ պահանջել որ ուրիշը ըլլա՛յ բարոյական, շիտակ, ազատութիւն եւ հաւասարութիւն յարգող: ԻՆՔՆԱՄԱՔՐՈՒՄԸ պարտադիր նախապայման է ամէն ԻՐԱԻՆՊԱՆՉԱՆՁՈՒԹԵԱՆ:

.....

ՕՏԱՐԱՑՈՒՄԸ ազգային ինքնութենէն ՄՏԴԱՄՏՈՒԹԵԱՆ մէկ արտայայտութիւն է, քանզի անիկա ուրիշ բան չէ, եթէ ոչ հրաժարիլ իր բուն էութենէն եւ անձնատուր ըլլալ մէկ այլ ինքնութեան, կամայ թէ ակամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ: Ինքզինք յարգող, արժանապատուութիւն ունեցող մարդը կը պայքարի կը ոգորի յանուն իր ԻՆՔՆՈՒԹԵԱՆ կենսունակ ՊԱՇՊԱՆՈՒՄԻՆ, կու չերթար օտարացնող հոսանքին, կը մաքառի յանուն իր ԱԶԱՏՈՒԹԵԱՆ: Քանի՛ քանի «ղեկավարներ», բարբառելով ազատութեան ընձեռած հնարաւորութեանց եւ բարիքներուն մասին, կամովին ընդ առաջ կ'երթան գերութեան շղթաներուն, քաղքենիութեան հմայքներուն անձնատուր, միաժամանակ բարձրագոյ աղաղակելով, որ «հայոց լեզուի իմացութիւնը կարելոր չէ հայ ըլլալու համար»:

.....

Միրոյ մասին խօսք ու տող կը հիւսենք, ՍԷՐԸ կը պանծացնենք, կը փառաւորենք ու կ'արժեւորենք: Այս բոլորէն անդին, ՍԷՐԸ կը մնայ մեր ազգային-հաւաքական կեանքին ՄԵԾ ԲԱՑԱԿԱՆ...ՍԷՐԸ է, որ կրնայ մեր մօտ՝ գութ ու կարեկցանք, ազնութիւն, վեհանձնութիւն, իրերօգնութիւն, խոնարհութիւն եւ այլ առաքիւնութիւններ ներշնչել: ՍԷՐԸ հրաշքներ կրնայ գործել ազգին ու հայրենիքին համար, անխարդախ, անդաւաճան եւ անկեղծ ՍԷՐԸ:

.....

Պահեր կան, երբ առանձնութիւնը խոկումի տրամադրութիւն կը ստեղծէ ներաշխարհիդ մէջ...մարդ-բնութիւն-տիեզերք խորունկ ներդաշնակութեան ապրումներով կը լիանաս: Բայց մարդ էակը էապէս ընկերային էակ է, ինչպէս պիտի ըսեր հելլէն փիլիսոփան՝



Արիստոտելը, աւելցնելով որ՝ մարդկային ընկերութենէն դուրս, ան կա՛մ աստուած է, կա՛մ ալ անասուն: Բայցեւայնպէս, առանձնութեան մէջ է որ մարդ կրնայ խորհրդածել, երեւոյթներու խորը թափանցամտիլ եւ նոյնիսկ ստեղծագործել կամ արարել: Բայց ԱՐԱՐԵԼԸ կամ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼԸ արդէն ԱՐԱՐԻՉԻ յատկանիշ է գերազանցօրէն եւ նման պահերուն ՄԱՐԴԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ ԱՐԱՐԻՉ, բառիս համեստագոյն չափերով:

.....

Մարդ էակը պիտի ընդունիլ իր տարօրինակութիւններով, իր թերութիւններով, ոչ թէ՛ զայն չափել ու ձեւել ըստ մեր ցանկութեան...: Ամէն մարդ արարած տիեզերք մըն է, որ ունի իր խորտուբորտ, անկիւնաւոր, պայծառ ու ոչ-պայծառ կողմերը: Ընդունիլ զայն, ինչպէս որ է եւ ջանալ անոր մէջ գտնուող լաւագոյնը յայտնաբերել: Սա է գուցէ ճիշդ վարուելակերպը այլոց նկատմամբ, ըլլան անոնք բարեկամ, ընկեր, ծանօթ, թէ հարազատ: Լաւագոյնը դուրս բերել եւ ընդգծել: Սա չէ՞ նաեւ դաստիարակչական սկզբունք մը, որ կը կիրարկուի մանուկներուն եւս: Նոյնիսկ բուսական աշխարհին մէջ, մոլախոտերը միշտ ալ կ'աճին ամէնէն չքնաղ ծաղիկներուն հետ միասին: Մեր բոլորին պարտաւորութիւնը պիտի ըլլար խնամել ծաղիկները այնպէս, որ անոնք չխեղդուին այդ վնասակար մոլախոտերուն մէջ:

.....

Ամէն օր մենք մեզ հայելիին առջեւ կը դիտենք, ստուգելու համար մեր արտաքին տեսքը, նախքան որ դուրս ելլենք տունէն եւ ներկայանանք հանրութեան...Սա սովորական մեր կենցաղին մաս կը կազմէ: Նոյնքան դիւրին չէ, վստահաբար, ստուգել մեր միտքերու, տեսակէտներու վաւերականութիւնը, բայց որքա՛ն էական է ատիկա կատարելը՝ ժամանակ առ ժամանակ, նախքան որ անոնք քարանան, ոսկրանան եւ դառնան ազատ միտքը կաշկանդող կարծրատիպեր: Միտք ածելով է որ կը ձերբազատուինք թիւր կարծիքէ մը, ինչպէս նաեւ՝ կը վերանորոգենք ճիշդը...Միտք ածելը, մտածելը մարդ էակի ազատութիւնն է, անոր փառքը:

.....

Ի՞նչ կ'արժէ եկեղեցի երթալ, մոմ վառել, ծունկի գալ եւ բարձրաձայն աղօթել, եթէ առօրեայ կեանքիդ մէջ անգութ ես, անկարեկից, անազնիւ եւ գռռոզ: Շատեր գիտեմ որոնք եկեղեցի չեն երթար, բայց սիրով, ողորմածութեամբ, բարութեամբ լեցուն սիրտ ունին: Ի գուր չէ որ Մեծ Մատեանին մէջ ալ կը նշուի, որ Արարիչը կը նայի մեր սրտին, անոր անկեղծութեան ու մաքրութեան, քան՝ բարեպաշտութեան ձեւեր հազած կեղծաւորութեան կամ ցուցամոլութեան:

.....

Դժուար է ԱԶԱՏ ըլլալ՝ մամոնայի եւ նիւթի բռնակալութենէն, դիւրին, հեշտ կենցաղի, գուարճանքներու գայթակղութենէն, փառքի ու դիրքի հրապուրանքէն, կերակրատաշտի ձրի եւ առատ վայելումէն, սովորութեան բռնատիրութենէն, անմիտ, ծոյլ ու յոյլ ապրելու

Թմբիրէն: Ջորն ասեմ ու գորն խոստովանիմ, զի անթիւ են մարդը ստրկացնող, անազատ դարձնող ԹԱԿԱՐԴՆԵՐԸ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## ՔԱՌԵԱԿՆԵՐ



Հատուած-հատուած բաժնուեցանք,  
Խմբակ-խմբակ մասնատուեցանք,  
Համայնք-համայնք տեղայնացանք,  
Բեկորներու ազգ մը դարձանք...

.....

Ճշմարիտը երբ կը խօսիս,  
Տասը գիւղէն վռննտուիս,  
Ամէն մարդ իր շահը ունի,  
Ճշմարիտը ընկեր չունի:

.....

Վա՛յ անոր որ նիւթականով լոկ կը սնանի,  
Գիշեր-ցերեկ կը հաշուարկէ թէ ի՞նչ ունի,  
Հոգին անոր կը մնայ սնանկ, անձկութեամբ լի,  
Նիւթը ինչպէ՞ս կրնայ լեցնել անափ հոգին...

.....

Խնամի, ծանօթ ու բարեկամ  
Հաւարական ոյժ մը դարձան,



**Ամէն մէկը իր շահն ունէր,  
Ազգին անուամբ լոկ կը խօսէր:**

.....

**Խիղճիդ միայն դուն հաշիւ տուր,  
Դատաւոր է ան անաչառ,  
Հանգիստ չի տար սխալներուդ,  
Թէ մաքուր է ան մընացած:**

.....

Ճիշդը ըսիր, գէշ մարդ կ'ըլլաս  
Ճիշդը չըսիր, լաւ մարդ կ'ըլլաս  
Ճիշդի, գէշի նեղ արանքին  
Գոնէ խիղճով ես ապրեցայ...

.....

Բարի աստղ մը երկնին շողաց,  
Ծնունդ առի այդ աստղին տակ,  
Եւ երբ մութ էր գորշ, անհամբոյր,  
Աստղս սփռեց շողք աստղալոյս...

.....

**Ամբողջ կեանք մը բաւարար չէ  
Որ հասկընաս մարդ էակը,  
Անոր հոգին առեղծուած մ'է,  
Ինչպէ՞ս տեսնես անոր խորքը:**

.....

**Հոգւոյդ լոյսը վառ պահէ միշտ,  
Մութ բաւիղին մէջ ալ իյնաս,  
Ան լոյս կու տայ չսայթաքիս,  
Զգլտորիս անդունդն ի վար:**

.....

Յետոյ միայն կը հասկնանք մեծութիւնը մեր կողքի,  
Երբ ա՛լ չկայ, երբ մեկնած է, հեռացած է յաւիտեան,  
Ինչպէս գանձը գոր ունէինք, բայց փայփայել չկրցանք  
Եւ կոտորելէն ետք միայն, տեսանք արժէքն թանկագին:

.....

Մէկը միւսին լոկ մեղադրեց,  
Մէկը միւսին ցեխարձակեց,  
Մէկը չեղաւ որ քաջաբար  
Ընդունէր որ ինքն էր սխալած:



.....

Հոն ուր սերը կը թեւածէ,  
Բիւր ժպիտներ շողան լուսէ,  
Չարն ու նենգը կը նահանջեն,  
Բարին միայն յաղթանակէ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ